

ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ

Գազիկ Տեր-Հարությունյան

ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի օգոստոսյան այցը Երեւան, որի արդյունքում երկարաձգվեց եւ նոր բովանդակություն ստացավ ռուսաստանյան ռազմակայանի վերաբերյալ պայմանագիրը, քաղաքական շրջանակներում լայն քննարկումների արժանացավ: Դրական արձագանքներին զուգահեռ կարելի է հանդիպել նաև բացասական կարծիքների, համաձայն որոնց՝ այդ պայմանագիրը ոչ միայն չի համընկնում մեր ազգային շահերին, այլև՝ զգալիորեն սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությունը: Այդ ամենի առիթով փորձենք ներկայացնել որոշ փորձագիտական նկատառումներ, որոնք, թերեւս, կնպաստեն խնդիրն ավելի համալիր ընկալելուն:

Թուրքիա. ՀՀ ազգային անվտանգության առաջնային սպառնալիքը

Հայաստանում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի հիմնական նպատակը ՀՀ ռազմական անվտանգության ապահովումն է Թուրքիայի հնարավոր ագրեսիայից: Վերջինս ռազմական տեսանկյունից հզոր, արդիական զենքի տիրապետող եւ մեծաթիվ բանակ ունեցող պետություն է: Միայն թուրքական ցամաքային ուժերի թվաքանակը (որն ամենամեծն է ՆԱՏՕ-ում) կազմում է շուրջ 450 հազար զինծառայող, չհաշված ժանդարմերիայի ստորաբաժանումները: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ ՀՀ ՁՈւ ներուժն այսօր եւ տեսանելի ապագայում անհամադրելի է Թուրքիայի ՁՈւ-ի հետ:

Միեւնույն ժամանակ, ռազմական խնդիրները կարելուրվում են գլխավորապես քաղաքական համատեքստում, եւ անհրաժեշտ է գնահատել, թե որքանով է իրատեսական թուրքական ՁՈւ-ի սպառնալիքը ՀՀ անվտանգությանը: Այդ խնդրում, չանդրադառնալով ավելի վաղ պատմական նախադեպերին, դիտարկենք ԼՂՀ-ի շուրջ զարգացումներով պայմանավորված ժամանակաշրջանը:

Հայտնի է, որ Թուրքիան ԼՂՀ-ի շուրջ ընթացող հակամարտության փաստացի կողմ է, որը սկզբից առայսօր սպասարկում է Ադրբեջանին ռազմական տեխնիկայով եւ «խորհրդականներով» (նախկինում՝ նաև

պատերազմական գործողություններին մասնակցող «կամավոր» զին-
ծառայողներով): Սակայն թուրքական աջակցությունը դրանով չէր
սահմանափակվում: 1992թ. գարնանը, երբ իրադրությունը Ղարա-
բաղյան ճակատում սկսեց փոխվել ի վնաս ադրբեջանցիների (մասնա-
վորապես, ազատագրվեց Շուշին եւ բացվեց Լաչինի միջանցքը),
Թուրքիան որոշեց անմիջականորեն միջամտել անցանկալի զարգա-
ցումներին եւ ռազմական հարձակում կատարել ՀՀ-ի վրա: Անկարան
հայտարարեց, որ ՀՀ-ն Նախիջեւանի դեմ ագրեսիա է պատրաստում,
մինչդեռ համաձայն 1921թ. Կարսի պայմանագրի՝ Թուրքիան Նախի-
ջեւանի անվտանգության երաշխավորն է: Հայ-թուրքական սահմանին
(հատկապես Նախիջեւան–ՀՀ սահմանագծում) կենտրոնացվել էին 3-րդ
դաշտային բանակի ստորաբաժանումները, մեծ քանակությամբ զրահա-
տեխնիկա եւ ավիացիա, իսկ ՀՀ ՁՈւ-ում հայտարարվել էր պատերազ-
մական իրավիճակ: Բախումն անխուսափելի կլիներ, եթե ԱՊՀ երկրների
զինված ուժերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Ե.Շա-
պոշնիկովը մայիսի 20-ին «Զվարթնոց» օդանավակայանում չհայտա-
րարեր, որ «եթե այնտեղ (հայ-ադրբեջանական հակամարտությանը)
ավելանա եւս մեկ կողմ, ապա մենք կհայտնվենք Երրորդ համաշխար-
հային պատերազմի եզրին»:

Պատերազմական իրավիճակ էր ձեւավորվել նաեւ 1993-ին, երբ
Անկարան, հուլիս ունենալով, որ ՌԴ-ում ծագած ներքաղաքական ճգնա-
ժանը («պառլամենտական խռովությունը») թույլ չի տա այդ տերու-
թյանը «զբաղվել» հայ-թուրքական խնդիրներով, մեղադրեց ՀՀ-ին իր
տարածքում քրդական զինյալների հենակետեր պահելու մեջ եւ
կենտրոնացրեց զորքերը սահմանին: Ջարգացումներն ընթանում էին
1992-ի սցենարով (դրանք, ի դեպ, համակողմանի ներկայացված են այն
տարիներին ՀՀ-ում Հունաստանի դեսպան Լեոնիդաս Խրիզանտո-
պուլոսի հուշերում): Սակայն ՌԴ կոշտ միջամտությունն այս անգամ եւս
կանխեց պատերազմը:

Ինչպես տեսնում ենք, ՌԴ-ի հետ ձեւավորված դաշնակցային-
ռազմավարական հարաբերություններն էին, որ ապահովեցին մեր
անվտանգությունը ոչ վաղ անցյալում: Հայտնի է նաեւ, որ ներկայիս
Թուրքիայի քաղաքական դիրքորոշումները Հայաստանի նկատմամբ,
ինչպես դա ցույց տվեց հայ-թուրքական վերջին բանակցությունների
ընթացքը, ամենեւին չեն փոխվել եւ լիովին պայմանավորված են ԼՂՀ եւ
ադրբեջանական գործոններով: Միեւնույն ժամանակ, գլոբալ հարթու-
թյունում ընթացող գործընթացների արդյունքում, այդ երկիրն ավելի

պակաս է վերահսկվում ԱՄՆ-ի կողմից, քան նախկինում: Այդ հանգամանքը, ինչպես նաև ներքին քաղաքական դաշտում կրոնական եւ ազգայնամոլական գաղափարախոսական ուղղությունների զարգացումը, դարձնում են թուրքիան ագրեսիվ եւ անկանխատեսելի մի երկիր, որն առնվազն տեսանելի ապագայում շարունակելու է մնալ մեր ազգային անվտանգության առաջնային սպառնալիքը:

Վերոնշյալին զուգահեռ պետք է հաշվի առնել, որ ներկայումս արձանագրվող ամերիկյան նահանջը տարածաշրջանից կարող է հանգեցնել քառտիկ իրադրության Մեծ Մերձավոր Արեւելքում, եւ այդ համատեքստում նույնպես հայ-ռուսական ռազմավարական դաշինքը հնարավորինս նպաստելու է, որ Հայաստանը զերծ մնա անցանկալի սցենարներից:

Ինքնիշխանության խնդիրը

Ընթացող բանավեճերում շահարկվում է նաև այն թեզը, թե 102-րդ ռազմակայանի առկայությունը սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությունը: Այդ առիթով նկատենք, որ, օրինակ, ԱՄՆ-ը այսօր աշխարհի տարբեր մասերում ունի, կախված հաշվարկման չափանիշներից, 600-800 ռազմակայան, որոնց մոտ կեսը գտնվում է Եվրոպայում: Մասնավորապես, 70 հազարից ավելի ամերիկյան զինծառայող տեղակայված է Գերմանիայում, 12 հազարական՝ Մեծ Բրիտանիայում եւ Իտալիայում, ամերիկյան ռազմակայաններ կան Բելգիայում, Իսպանիայում, Լեհաստանում եւ Եվրոպական այլ երկրներում: Սակայն այդ երկրների հանրությունները չեն համարում, որ դրանց առկայությունն ինչ-որ կերպ սահմանափակում է իրենց ինքնիշխանությունը:

Նշենք նաև, որ քննարկման առարկա դարձած ՀՀ ինքնիշխանության մակարդակը, շնորհիվ վարվող բազմակետոր արտաքին քաղաքականության, բավական բարձր մակարդակի վրա է: Մասնավորապես, «օտար երկրների միջամտությունից» կամ «արտաքին գործոններից» ՀՀ կախվածությունը, համաձայն «Foreign Policy Magazine» եւ «The Fund for Peace» հեղինակավոր կազմակերպությունների 2009թ. հրապարակած վարկանիշային տվյալների, էապես ցածր է տարածաշրջանային մեր հարեւաններից. ՀՀ-ի համար վերոնշյալ չափանիշներով հաշվարկված ցուցանիշը կազմում է 5.9, մինչդեռ Թուրքիայինը՝ 6.2, Ադրբեջանինը՝ 7.0 (որտեղ, ի դեպ, դեռևս գործում է ՌԴ ռազմակայանը՝ Գաբալայի ռադարային համակարգը): Ամենաբարձրը Վրաստանի ցուցանիշն է՝ 9.5, այսինքն՝ այդ երկիրը կարելի է դասել «արտաքին

կառավարում» ունեցող «չկայացած» երկրների շարքին: Համեմատության համար նկատենք, որ Գերմանիայի (որտեղ, ինչպես արդեն նշել ենք, տեղակայված է ամերիկյան շուրջ 70 հազար զինծառայող) համապատասխան ցուցանիշը կազմում է 2.4:

Ադրբեջանական գործոնը

Հայ-ռուսական հարաբերությունների քննարկումների ընթացքում հաճախ է հնչում այն միտքը, թե Ռուսաստանի ռազմական ներկայությունը չի ապահովում ԼՂՀ անվտանգությունն Ադրբեջանի հետ հնարավոր պատերազմում: Անշուշտ, իրավական տեսանկյունից ԼՂՀ-ն հայ-ռուսական հարաբերությունների սուբյեկտ չի հանդիսանում, եւ 102-րդ ռազմակայանն իրավասու չէ միջամտելու ԼՂՀ–Ադրբեջան հակամարտությանը: Սակայն կոնկրետ պարագայում պետք է հաշվի առնել հետեւյալ հանգամանքները.

- Ադրբեջանի եւ ՀՀ–ԼՂՀ-ի ռազմական հնարավորությունները համադրելի են, այսինքն՝ հայկական կողմը կարող է նվազագույնը համարժեք պատասխան տալ Ադրբեջանի ոտնձգություններին:

- ԼՂՀ–Ադրբեջան հնարավոր ռազմական բախման պարագայում ՀՀ անվտանգության երաշխավորումը ՌԴ-ի կողմից զգալիորեն կնպաստի, որպեսզի ՀՀ-ն կենտրոնացնի իր ուժերը ԼՂՀ անվտանգության (որի փաստացի երաշխավորն է) ապահովման ուղղությամբ, քանի որ նկատելի չափով ձերբազատված կլինի ոչ միայն ՀՀ–Թուրքիա, այլեւ ՀՀ–Ադրբեջան սահմանների պաշտպանության խնդիրներից:

- ՀՀ–ՌԴ պայմանագիրն ունի քաղաքական նշանակություն, եւ նման պայմանագրի առկայությունն արդեն իսկ նվազեցնում է պատերազմի հավանականությունը ԼՂՀ-ի դեմ: Այդ հանգամանքը լավագույնս ըմբռնել են Բաքվում, որտեղ պաշտոնական մակարդակով հայտարարում են, թե կնքված պայմանագիրը չափազանց մեծ առավելություններ է տալիս Հայաստանին, եւ որ նման քայլը վկայում է Ռուսաստանի կողմնակալ դիրքորոշման մասին:

Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ ռազմակայանի վերաբերյալ պայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ ս.թ. հունիսին Դ.Մեդվեդեւի միջնորդությամբ կայացած Սարգսյան–Ալիեւ պետերբուրգյան հանդիպումից ընդամենը երկու ամիս անց: Ինչպես հայտնի է, այդ հանդիպումից անմիջապես հետո Ալիեւը ցուցադրաբար լքեց Սանկտ Պետերբուրգը, ինչն էլ առիթ տվեց վերլուծաբաններին ենթադրելու, որ բանակցություն-

ներում ՌԴ նախագահին առաջարկել է նոր եւ ադրբեջանական կողմին ոչ այնքան նպաստավոր մոտեցումներ (ոմանք դրանք անվանեցին «պետերբուրգյան սկզբունքներ»): Այդ համատեքստում չի կարելի բացառել, որ երեւանյան պայմանագրի կնքումը յուրովի պատասխան էր Ադրբեջանի նախագահին՝ նրան ավելի հանդուրժողական դարձնելու նկատառումով: Անուղղակիորեն դրա մասին են վկայում նաեւ ՌԴ նախագահի սեպտեմբերի սկզբին Բաքու կատարած այցի ընդգծված պաշտոնական բնույթը եւ փոքր-ինչ գորշ մեկնաբանումները ՁԼՄ-ում:

Պատահական չէ նաեւ այն փաստը, որ ՌԴ նախագահի Երեւան այցի նախօրեին Ադրբեջան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը, եւ կողմերը ստորագրեցին «Ռազմավարական համագործակցության եւ փոխօգնության մասին» պայմանագիրը: Բնորոշ է, որ այդ օրերին տեղեկատվական դաշտում դարձյալ սաստկացան Նախիջեւանում թուրքական ռազմական հենակետեր տեղակայելու մասին հաղորդումները:

Համադրելով հայ-ռուսական եւ թուրք-ադրբեջանական պայմանագրերը՝ կարելի է եզրակացնել, որ մեր տարածաշրջանում առկա են ՌԴ–ՀՀ եւ Թուրքիա–Ադրբեջան քաղաքական բեւեռների բյուրեղացման միտումներ, ինչը համահունչ է ավանդական աշխարհաքաղաքականության տրամաբանությանը (բավական է հիշել, որ 18-րդ դարից սկսած Ռուսաստանը 12 պատերազմ է վարել Թուրքիայի դեմ): Սա կարելի է հաստատում է այն վերլուծաբանական կանխատեսումները, համաձայն որոնց՝ միաբեւեռից բազմաբեւեռ աշխարհակարգի անցման փուլին բնորոշ «բաժանման» եւ «տրոհման» գործընթացները փոխարինվելու են քաղաքակրթական հատկանիշների վրա հենված ինտեգրացիոն գործընթացներով:

Որոշ հետեւություններ

Հայտնի է, որ շահավետ պայմանագրերը եւ օտարերկրյա հզոր ռազմակայանները կարող են ընդամենը բարձրացնել տվյալ պետության ապահովության մակարդակը, սակայն ազգային անվտանգության հիմնական երաշխիքը շարունակում է մնալ սեփական ռազմաքաղաքական, մտավոր-հոգեւոր եւ սոցիալ-տնտեսական ռեսուրսների անհրաժեշտ եւ բավարար քանակը: Այդ առումով այսօր հատկապես կարելի է մտավոր ռեսուրսների խնդիրը, քանի որ ապագայի հակամարտությունների արդյունքները, ավելի քան նախկինում,

պայմանավորված են լինելու առաջին հերթին այդ ռեսուրսների քանակով եւ որակով:

Նման ռեսուրսների ցուցանիշ է հանդիսանում հանրության կողմից մարտավարական եւ ռազմավարական հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ կատարելու կարողությունը: Դա հատկապես կարելի է ներկայիս անցումային շրջանում, երբ տեղի են ունենում աշխարհաքաղաքական տեղաշարժեր եւ հաստատուն թվացող պատկերացումների ու աշխարհընկալումների կտրուկ փոփոխություններ: Թերեւս, սպասվող փոփոխությունների պատճառով է, որ այսօր առաջատար երկրներում էապես աճել է կանխատեսումային եւ սցենարային մշակումների ծավալը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՌԴ նախագահի ՀՀ կատարած օգոստոսյան այցի քննարկումներում կենտրոնական դեր է զբաղեցնում Հայաստանում ռուսական ռազմա-կայանի տեղակայման ժամկետի երկարաձգման մասին ստորագրված համաձայնագիրը: Սակայն պետք է ասել, որ էներգետիկ ոլորտում ձեռք բերված պայմանավորվածությունները պակաս կարեւորություն չեն ներկայացնում:

ՀՀ անկախացումից հետո մեր պետության տարածքում իրականացված ամենախոշոր տնտեսական նախագիծը մինչեւ օրս մնում է արդեն շահագործման հանձնված Իրան–Հայաստան գազատարը: Բավական բարդ եւ թանկ այս նախագիծն իր կարեւորությամբ ՀՀ-ի համար անփոխարինելի է, քանի որ Վրաստանի տարածքով բնական գազի մատակարարման խափանման դեպքում կարող է ապահովել ՀՀ էներգետիկ համակարգի բնականոն գործունեությունը: Սակայն, անկասկած, ՀՀ ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման նախագիծն ավելի կարեւոր է լինելու մեր էներգետիկ եւ ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, քան Իրան–Հայաստան գազատարը: Այս հանգամանքն անմիջականորեն կապված է այն հիմնական առանձնահատկությունների հետ, որոնք ունի ՀՀ էներգետիկ համակարգը:

ՀՀ էներգետիկ համակարգի ապահովման ներքին միջավայրը

Չնայած բավական մեծ ներդրումներին, որոնք վերջին 12-13 տարիներին իրականացվել են ՀՀ էներգետիկ համակարգում, այն դեռեւս լուրջ նորացման կարիք ունի: Երեւանի ՋԷԿ-ի արդիականացումն ու «Հայֆուսգազարդի» կողմից Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցումը ՀՀ էներգետիկ համակարգում իրականացված արդիականացման ամենալուրջ նախագծերն են: Դրանք, լուծելով բավական կարեւոր հարցեր, միեւնույն ժամանակ մեր էներգետիկ համակարգի կարեւորագույն խնդրի՝ էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների արդյունա-

վետության բարձրացման հարցի լուծումը չեն գտել: Արդիականացման լուրջ խնդրի առջև են կանգնած Հրազդանի ՁԷԿ-ի 4 էներգաբլոկները, ինչի համար հսկայական ներդրումներ են պետք, որոնք դժվար է լինելու ապահովել: Ներդրումների բացակայության հիմնական պատճառն այն է, որ Հայաստանի էներգետիկ համակարգը, ընդհանուր առմամբ, շահութաբեր չէ: Սա պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով.

1. Հայաստանից լուրջ ծավալներով էլեկտրաէներգիայի արտահանում չի իրականացվում, ինչը զրկում է էլեկտրաարտադրողներին շուկայական գին ստանալ իրենց արտադրանքի համար,

2. բուն ՀՀ տարածքում էլեկտրականության գինը մնում է համեմատաբար ցածր, քանի որ կառավարությունը սահմանափակում է գնաճն այս ոլորտում՝ հաշվի առնելով դրա ակնհայտ բացասական ազդեցությունը սոցիալական կայունության վրա:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ դժվար թե մեծածավալ ներդրումներ իրականացվեն ջերմաէներգետիկ համակարգում, ինչն ապագա տարիներին կարող է բացասական ազդեցություն ունենալ ՀՀ էներգետիկ անվտանգության համակարգի վրա:

ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման արտաքին միջավայրը

Ռուսաստանից Հայաստան ձգվող գազատարի կայուն գործունեությունը կախված է ոչ թե հայ-վրացական, այլ ռուս-վրացական հարաբերություններից: Հեռանկարում գազատարը կարող է «զոհ գնալ» հերթական ռուս-վրացական կոնֆլիկտին: Իրանի հետ գազատարի առկայությունը Հայաստանին հնարավորություն է տալիս ռուսական գազի փոխարեն այլընտրանքային գազ ներկրել, սակայն իսլամական հանրապետության հետ էներգետիկ համագործակցությունն ունի լուրջ խնդիրներ, որոնցից հիմնականը երկուսն են.

1. Իրանն, ամենայն հավանականությամբ, դեռևս երկար ժամանակ կանգնած կլինի ամերիկյան ռազմական հարվածի կամ ներխուժման վտանգի առջև: Դրանց իրականացման դեպքում Հայաստան–Իրան գազատարի կայուն գործունեության մասին խոսք անգամ չի կարող:

2. Դեռևս անհայտ է, թե ինչ գնով Հայաստանը, կարիքի դեպքում, գազ կգնի Իրանից: Չնայած հայ-իրանական հարաբերությունների բարձր մակարդակին՝ Թեհրանը դժվար թե հայկական կողմին շուկայականից զգալիորեն ցածր գնով գազ վաճառի, ինչը տեղի է ունենում ռուսական գազի պարագայում:

Այս ամենը հաշվի առնելով՝ դժվար է ջերմաէներգետիկան Հայաստանում հեռանկարային ուղղություն համարել: Այն, իհարկե, բավական մեծ համակարգ է, սակայն զգալիորեն խոցելի, եւ 1993թ. էներգետիկ ճգնաժամի կրկնության հնարավորությունը Մեծամորի ԱԷԿ-ի գործող էներգաբլոկի փակումից հետո բավական մեծ է: Հաշվի առնելով բնական գազի ներկրման հեռանկարային ռիսկայնությունը՝ ՀՀ էներգետիկ համակարգի կայունության ապահովման հիմնական առաքելությունը պետք է դրված լինի միջուկային էներգետիկայի վրա:

Ատոմային էներգետիկայի հեռանկարները Հայաստանում

ՀՀ կառավարության որոշումը՝ 2016-ից Մեծամորի ԱԷԿ-ի գործող էներգաբլոկը հանել շահագործումից, թեւեւ մասամբ ԵՄ ճնշման արդյունք էր, սակայն արդարացված որոշում էր: Գործող ատոմակայանը բարոյապես սպառված է, իսկ նրա հզորությունը բնական գազի ներկրման կասեցման դեպքում հնարավորություն չի կարող տալ խուսափել նոր էներգետիկ ճգնաժամից: Այս տեսանկյունից ԱԷԿ-ի գործող 440 մվտ հզորությամբ էներգաբլոկի փակման եւ գրեթե անմիջապես հետո նոր, ավելի հզոր՝ առնվազն 1000 մվտ հզորությամբ էներգաբլոկի կառուցման մասին որոշումներն ուղղակիորեն արդարացված են ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից:

ՀՀ-ի համար նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հիմնական հարցը եղել եւ մնում է նախագծի ֆինանսավորումը: Նշենք մի ուշագրավ փաստ. այսօր Հայաստանի Հանրապետությունը նոր ատոմակայաններ կառուցող պետությունների մեջ ՀՆԱ բացարձակ արժեքով ամենավերջին տեղում է գտնվում: Ակնհայտ է, որ նման մակրոտնտեսական ցուցանիշներ ունենալով, սեփական միջոցներով նման թանկ նախագիծ՝ միջուկային էներգաբլոկի կառուցում, իրականացնել չի կարելի: Օրինակ, Բուլղարիան, որի ՀՆԱ-ն գերազանցում է հայկականն ավելի քան 5 անգամ, 2009-ին ստիպված է եղել կասեցնել Բելենի ատոմակայանի կառուցումը, քանի որ չի կարող ֆինանսավորել նախագիծը: Իսկ միջազգային ներդրողները պատրաստ չեն ստանձնել էներգաբլոկի կառուցման ֆինանսավորումը, քանի որ դեռեւս ակնհայտ չէ, որ նախագիծը ներդրողներին ապագայում զգալի շահույթ կբերի:

Գրեթե նույն խնդրի առջեւ է կանգնած նաեւ ՀՀ-ն, քանի որ արտասահմանյան ներդրումների խրախուսման համար մեր երկրում միջուկային էներգաբլոկի կառուցումը զուտ տնտեսական տեսանկյունից պետք է շահավետ լինի, ինչպիսին այն չի հանդիսանում: Ակնհայտ է, որ ՀՀ

իշխանությունները հետագայում էլ ամեն կերպ սահմանափակելու են էլեկտրաէներգիայի գնաճը՝ ցանկանալով մեղմացնել բնակչության սոցիալական բեռը: Այս պարագայում հայկական նոր ատոմակայանի կառուցման ֆինանսավորողը պետք է որ հասկանա, թե կայանի միջոցով գերշահույթներ ստանալն անհնար է:

Չենց այս հանգամանքով է պայմանավորված այն, որ էներգաբլոկի կառուցման նախագիծը շատ չհետաքրքրեց ներդրողներին: Միակ պետությունը, որը հետաքրքրություն է հայտնել, Ռուսաստանն է, որը եւ, համաձայն օգոստոսի 20-ին կնքված համաձայնագրի, կստանձնի նախագծի ֆինանսավորման զգալի մասը: Բացասական երանգով շատ քննարկումներ եղան եւ, հավանաբար, հետո էլ կլինեն այն մասին, որ Մոսկվան էներգաբլոկի կառուցման միջոցով ցանկանում է ամրապնդել դիրքերը Չայաստանում: Անկասկած, Մոսկվան ունի նման մտադրություններ, եւ դրանք բխում են իր հիմնարար շահերից, սակայն անհասկանալի է, թե ինչու մենք պետք է դրան բացասաբար նայենք: Կարծիք կարող է ստեղծվել, թե Միացյալ Նահանգները հովանավորել է Բաբու – Թբիլիսի – Ջեյհան նավթատարի կառուցումը զուտ մարդասիրական զգացումներից ելնելով: Այո, կասկածից վեր է, որ էներգաբլոկի կառուցումից հետո ռուսական ներկայությունը Չայաստանում ավելի է ամրապնդվելու, սակայն դեռեւս չի հնչել որեւէ լուրջ փաստարկ, թե ինչով է դա հարվածում մեր շահերին: Դեռեւս ոչ մի հիմնավոր փաստարկ չի հնչել, թե ինչպես է Մոսկվան օգտագործելու ատոմակայանը մեզ վրա բացասաբար ազդելու համար: Քանդելու է այն եւ տեղափոխելու է ուրի՞շ պետություն:

Միջուկային էներգետիկան միշտ եղել է կարելուր քաղաքական գործոն: Ինչպես նավթն ու բնական գազը, այնպես էլ միջուկային էներգետիկան կախված են միջազգային տնտեսական եւ քաղաքական գործընթացներից, եւ այդ պատճառով մենք չպետք է տարանջատենք այն քաղաքականությունից: Այս իմաստով, բնական եւ օբյեկտիվ պատճառներով Ռուսաստանն է այն միակ պետությունը, որը կարող է Չայաստանում ֆինանսավորել եւ կառուցել նոր միջուկային էներգաբլոկ, ինչը մոտ կես դար լինելու է հայկական էներգետիկ անվտանգության ապահովման հիմնաքարը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐԸ

Արեստակես Սիմավորյան

Ներկայումս Ռուսաստանի տարածքում հայերը ներկայանում են երեք հիմնական դավանանքներով՝ առաքելական, կաթոլիկ, բողոքական: Մի շարք վայրերում կան նաև ուղղափառ, վերջին մի քանի տարիներին՝ լյութերական հայեր:

Ընդհանրապես, հայ կաթոլիկների առնչությունը Ռուսաստանի հետ պատմական տեսանկյունից կարելի է բաժանել 3 շրջանների՝ ցարական, խորհրդային և հետխորհրդային:

Պատմական ակնարկ

Ռուսական կայսրությունում կաթոլիկությունը տարածում գտավ 1684 թվականից, երբ Ինոկենտի XI պապը միսիոներական առաքելություն հայտարարեց դեպի Ռուսաստան: Առհասարակ, կաթոլիկության տարածումը Ռուսաստանում համընկավ Պետրոս Առաջինի զահակալության տարիներին, երբ վերջինիս քաղաքականության արդյունքում եվրոպական նորամուծությունները թափանցեցին պետական և մշակութային կյանք: Կաթոլիկներ էին դառնում քաղաքական և պետական այրեր, ինչը շարունակվեց Ալեքսանդր Առաջինի օրոք: Հասարակության մեջ կաթոլիկությունն աստիճանաբար տարածվեց Մոսկվայում, Կիեւում, Սմոլենսկում: Լեհաստանի առաջին բաժանումից հետո՝ 1772թ., կաթոլիկների թիվը հասավ տասնյակ հազարների. նրանց մեջ նաև լեհահայ կաթոլիկներ կային:

Ռուսական կայսրությունում հայ կաթոլիկների համեմատաբար խոշոր խմբեր հայտնվեցին 1768–1774թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, Ղրիմի նվաճման և Ռեչ Պոսպոլիտայի երրորդ բաժանման հետևանքով (1775): Հայերի կաթոլիկացման նախադրյալները Ղրիմում արդեն փաստ էին, կաթոլիկությունը ընդունում էին մեծահարուստ առևտրական հայերը, որոնք լուրջ մրցակցության մեջ էին ջենովացի կաթոլիկ առևտրականների հետ:

Արդեն 19-րդ դ. հայ կաթոլիկներ հիշատակվում էին Ռուսաստանի կազմի մեջ մտնող մի շարք քաղաքներում՝ Աստրախանում, Օդեսայում, Ղրիմի թերակղզու մի շարք վայրերում: Հետագայում Աստրախանից, Թուրքիայից և Պարսկաստանից (1720–1760թթ.) հայ-կաթոլիկները

գաղթեցին Մոզդոկ եւ Կիզլյար քաղաքներ, որտեղ եւ ստեղծվեցին առաջին համայնքն ու հայ կաթոլիկ եկեղեցին, որն այսօր էլ գործում է: Վերոհիշյալ քաղաքներից բացի, 19-րդ դ. հայ կաթոլիկ համայնքներ առաջացան Գրոզնիում, Վլադիկավկազում, Պյատիգորսկում, Թեմիրխան Շուրեում, Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում, 20-րդ դ.՝ Վորոնեժում, Պեմզայում, Ռոստովում եւ այլն:

Ռուսական կայսրության սահմաններում հայ կաթոլիկներ հայտնվեցին նաեւ Բեսարաբիայի՝ ներկայիս Մոլդովայի վրա իշխելուց հետո: Չետաքրքիր է, որ նրանք արդեն չէին տիրապետում հայերենին, խոսում էին լեհերեն եւ լեհական մշակույթի կրողներ էին: Քիչնեւ եւ Բելց քաղաքները դարձան հայ կաթոլիկների համայնքային կյանքի կենտրոններ: Բեսարաբիայի հայ կաթոլիկների համար ցարական իշխանությունները հատուկ հրովարտակով թեմ հիմնեցին՝ Յասսա կենտրոնով:

Ռուսաստանին միանալուց հետո կայսրության կազմի մեջ հայտնվեցին նաեւ Վրաստանի հայ կաթոլիկները, որոնք բնակվում էին Ախալցխայում, Ախալքալաքի շրջանում, Թբիլիսում եւ այլուր:

1909թ. Ռուսական կայսրությունում հայ կաթոլիկների համար ստեղծվեց Առաքելական կառավարչություն, որում 1917թ. արդեն հաշվվում էր 47 հոգեւորական, 45 եկեղեցի, մատուռ՝ 66.618 հետեւորդներով:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո աթեիզմ հռչակած իշխանությունները հալածանքների սլաքն ուղղեցին նաեւ կաթոլիկ զանգվածի վրա՝ անկախ էթնիկ պատկանելությունից: Ռուսաստանի կաթոլիկ հասարակայնության մաս կազմող հայերը նույնպես ենթարկվեցին հալածանքների: Առանձնապես կաթոլիկների նկատմամբ նման դիրքորոշումն ուներ նաեւ քաղաքական երանգ, ինչը դիտվում էր որպես արտասահմանի հետ կապերի չեզոքացման անհրաժեշտ «միջոցառում»: Չատկանշական է, որ այդ «միջոցառումները» հատկապես տեղի էին ունենում խորհրդային սահմանամերձ տարածքներում՝ Վրաստանի հայաբնակ Սամցխե-Չավախքում, Բաթումում, Լվովում՝ հայ, լեհ եւ գերմանացի կաթոլիկների շրջանում: Սամցխե-Չավախքը, օրինակ, համարվեց «սահմանային գոտի»: Այդ ամենի պատճառով կաթոլիկ հոգեւորականությունը, իբրեւ արտասահմանի հետ կապված անվստահելի տարր, մեծ խոչընդոտների էր հանդիպում գյուղեր այցելություններ կատարելիս, քանի որ այնտեղ մեկնելու համար անհրաժեշտ էր հատուկ անցաթուղթ ունենալ:

1937թ. դադարեց գործել Կրասնոդարի հայ կաթողիկե եկեղեցին: 1940թ. Լվովի հայ կաթոլիկական մետրոպոլիան հայտնվեց խորհրդային բանակի վերահսկողության տակ, եկեղեցու հետեւորդ հայերի գրեթե

կեսը՝ 2500 մարդ, արքայազն Սիբիր, իսկ նրանց ղեկավար հայր Դիոնիսի Կանտանովիչը ձերբակալվեց եւ մահկանացուն կնքեց արքայազն Վրացի Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի, Տիսմենիցայի, Լիսեցի Սնյատինի, Բերեժանի, Գորոդենկայի, Կուտի հայ կաթողիկե եկեղեցիների գույքի մեծ մասն ազգայնացվեց: Լվովի հայ կաթողիկե եկեղեցու եւ նրա հետեւորդների վերջնական «լիկվիդացումն» իրականացվեց Ն.Խրուշչովի անմիջական հրահանգով:

Այս իրադարձություններից հետո հայ կաթողիկներն ապրում էին որպես Խորհրդային Միության քաղաքացիներ, եւ խոսել նրանց համայնքային, հոգեւոր կյանքի մասին պարզապես անհնար է:

Ռուսաստանի, ինչպես նաեւ հետխորհրդային տարածքում կաթողիկոսության վերածնունդը համընկավ վերակառուցման տարիներին: Այն անմիջականորեն թույլատրվել էր ԽՍՀՄ իշխանությունների կողմից, միայն թե այդ գործընթացը ՊԱԿ վերահսկողության տակ էր գտնվում: Խորհրդային Միության փլուզումից հետո աստիճանաբար ընդլայնվեցին Վատիկանի հոգեւոր սահմանները:

ԽՍՀՄ նախկին հանրապետությունների հայ կաթողիկները, որոնք ապրում էին հիմնականում Հայաստանում, Վրաստանում եւ Ռուսաստանում, մտան նորաստեղծ Արեւելաեվրոպական թեմի մեջ (կենտրոնը՝ Գյումրի):

Այժմեականությունը

Ներկայիս Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հայ կաթողիկների թիվը չի գերազանցում 59 հազարը: Հայության տարադավան այս խումբը կազմված է երկու հիմնական շերտից՝ հնաբնակներից եւ ներգաղթյալներից, որոնց միջեւ դժվար է հստակ սահմաններ անցկացնել, քանի որ շատ դեպքերում նրանք կազմում են խառը բնակչություն՝ կենտրոնացված քաղաքներում:

Թեեւ Ռուսաստանի կաթողիկների հիմնական միջուկը լեհերը, գերմանացիներն ու ուկրաինացիներն են, սակայն մի շարք քաղաքներում հայերը դավանանքային տեսանկյունից գերազանցում են վերջիններիս:

Հայ կաթողիկներն առավել խիտ բնակվում են Ռուսաստանի հարավում՝ Կրասնոդարի երկրամասում, ընդ որում, այստեղ հնաբնակներ կարելի է համարել Արեւմտյան Հայաստանից՝ 1894–1920թթ. գաղթած հայերին, որոնք Սանգիսե-Ջավախքից արտագաղթած (1960-ից առ այսօր շարունակվող) հայության հետ միասին կազմում են Կուբանի ընդհանուր կաթողիկների 70 տոկոսը:

Արդվիմից գաղթած հայ կաթոլիկները բնակվում են Դոնի Ռոստովում, Տագանրոգում, Կրասնոդարում, Սոչիում, Նովոռոսիյսկում, Անապայում, իսկ Կալինինսկի շրջանում՝ բայազեդցի հայ կաթոլիկների սերունդները: Այդուհանդերձ, նշենք, որ այս քաղաքներում բնակվում են նաև Վրաստանից արտագաղթած հայ կաթոլիկները, ովքեր ավելի հոծ բնակվում են Կուրգանինսկում, Աբինսկում, Գելենջիկում: Մնացած հայ կաթոլիկները եկել եւ այստեղ են հաստատվել նաև Հայաստանի հյուսիսային շրջաններից՝ Աշոցքից եւ Տաշիրից, այլ քաղաքներից ու գյուղերից:

Չնայած հայ կաթոլիկների զգալի առկայությանը, համայնքների մեծ մասը սեփական եկեղեցի չունի: Հետեւաբար, այս պայմաններից ելնելով՝ ստիպված են հաճախել լատինաժեսու եկեղեցիներ, որտեղ քարոզները հիմնականում կատարվում են լեհ եւ այլազգի հոգեւորականների կողմից: Միակ մխիթարող հանգամանքն այն է, որ լատինական եկեղեցի այցելող հայերի համար երբեմն սպասարկում են հայ հոգեւորականներ՝ հայկական ծեսով: Կրասնոդարում այդ գործը կատարում է հայ հոգեւորական Սերգեյ Բաբաջանյանը, որը կարողանում է համախմբել հայերին համազգային նշանակության միջոցառումներին:

Չնայած այն հանգամանքին, որ Հռոմի կաթոլիկ եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջդավանական համագործակցությունը բավական բարձր մակարդակի վրա է գտնվում, այդուհանդերձ, կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքը լավագույններից չէ: Ռուսաստանի կրոնական դաշտի բազմազանությունը երբեմն այդ երկրում դիտվում է որպես ազգային անվտանգության սպառնալիք:

Այս համատեքստում հայ կաթոլիկները խնդիրներ չունեն, քանի որ ընկալվում են որպես հայեր, այսինքն՝ էթնիկական գործոնն առաջնային է, իսկ քանի որ շատ քչերին է հայտնի, որ հայերը կարող են լինել նաև կաթոլիկներ, դավանանքային հողի վրա վեճեր չեն ծագում (բացառությամբ իրավական խնդիրների): Մյուս կողմից՝ հայ կաթոլիկներն առանձին ինչ-որ ուժ չեն ներկայացնում, նրանք բավական լավ հարաբերություններ ունեն ոչ դավանակից հայերի հետ եւ ինտեգրված են ռուսական հանրությանը: Նման հարաբերությունները ձեւավորվել են վաղեմի ժամանակներից եւ հանդուրժողականության մթնոլորտում:

Ռուսաստանում հայ կաթոլիկներն ապրում են ցրված, հետեւաբար՝ ցանկացած քաղաքում, ուր բնակվում են տարադավան հայեր, կազմում են մեկ համայնք՝ հայկական: Իսկ այնտեղ, որտեղ հայ կաթոլիկները կենտրոնացված են ապրում, դրանք ընկալվում են որպես կրոնական փոքրամասնության համայնք:

Միջոցավանական հարթությունում հայերի միջեւ սուր հակասություններ չկան, չկան այնպիսի խնդիրներ, որոնք պարարտ հող կլինեին կրքեր բորբոքելու համար: Դա արտահայտվում է ինչպես կենցաղային (ամուսնություններ, համատեղ ուսումնառության, ամառային ճամբարներ եւ այլն), այնպես էլ համազգային նշանակության միջոցառումներում:

Ակտիվ հայ կաթոլիկ համայնք է Մոսկվայինը: Հատկանշական է, որ այս քաղաքի համայնքը գլխավորապես կազմված է Սամցխե-Ջավախքից արտագաղթած հայերից: Մասնավորապես, համայնքի ինքնակազմակերպման խնդիրը կատարում են Նորշեն (Ախալցխայի շրջան) գյուղից արտագաղթածները, որոնց հետ միասնաբար են գործում հնաբնակ մոսկվահայերը, Ախալքալաքի, Թբիլիսիի, Բաքվի, Թուրքմենստանի եւ ԱՊՀ երկրներից այստեղ բնակություն հաստատածները:

Վրաստանի հայաբնակ տարածքներից արտագաղթած հայ կաթոլիկների որոշ մասը վերադառնում է առաքելականությանը, դա շատ անգամ տեղի է ունենում ամուսնական կապերի միջոցով: Բայց դրան զուգահեռ՝ մի քանի գործոնների պատճառով, անկախ դավանանքային պատկանելությունից, հայության շրջանում աստիճանաբար ինքնական ուղղափառ դառնալու փոքր միտում է նկատվում: Հատկապես այն քաղաքներում, որտեղ հայերը փոքրաթիվ են, համայնքը դեռ կայացած չէ, չունեն եկեղեցիներ (սա վերաբերում է դավանական բոլոր խմբերին) կամ հեռու են գտնվում իրենց մարզերից, հարկադրված ամուսնանում (նաեւ խառնամուսնությունների տեսքով) եւ կնքվում են ռուսական եկեղեցիներում:

Թեեւ Ռուսաստանի հայ կաթոլիկները մտնում են Արեւելաեվրոպական թեմի մեջ, նրանք չեն կարողանում գրանցվել որպես կրոնական համայնք: Սա, թերեւս, ամենասուր խնդիրն է, որը վերջին շրջանում մեծ արձագանք է գտել կրոնական եւ իրավական հարցերով զբաղվող կազմակերպությունների մոտ: Ջգալի է նաեւ հոգեւորականների պակասը, ինչն ունի համայնքին ներհատուկ բնույթ:

Ավելորդ չէ նշել, որ սույն թվականի հունվարի 8-ին անակնկալ հրաժարական տվեց Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելաեվրոպական թեմի առաջնորդ Նշան արքեպիսկոպոս Կարաքեհեյանը: Նրա փոխարեն Վատիկանի կողմից նշանակվել է Մխիթարյան հայր Վահան վարդապետ Օհանյանը՝ որպես Հայ Կաթոլիկ թեմի Առաքելական կառավարիչ, որի իրավասության ներքո են գտնվում նաեւ Ռուսաստանի թեմապատկան համայնքները:

Վերջին երկու տարում դատական լուրջ գործընթացների մեջ է հայտնվել Մոսկվայի Հայ Կաթոլիկ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը

2009թ. դատական հայց էր ներկայացրել քաղաքային իշխանություններին՝ ցանկություն հայտնելով գրանցվել որպես կրոնական համայնք: Սակայն հայցը մերժվել էր առանց վերանայման: Արդարադատության նախարարության պատկան մարմինները պատճառաբանել էին, թե եկեղեցին փաստաթուղթ չէր ներկայացրել, ինչը կհաստատեր հայ կաթոլիկների ներկայությունն այս շրջանում 15 տարիների ընթացքում:

Հատկանշական է, որ Հայ կաթողիկե համայնքը Մոսկվայում Ս.Լյուդովիկ կաթոլիկ եկեղեցում սկսել էր հավաքվել 1980-ական թվականների կեսերից, իսկ 1991 թվականից այն գործում էր կանոնավորապես:

Հայ կաթոլիկների դատապաշտպան Վ.Ռյախովսկին ս.թ. հուլիսին նշել է, որ Մոսկվա քաղաքի կրոնական կազմակերպությունների եւ պատմական արխիվի ղեկավարության օժանդակությամբ ՌԴ Մոսկվայի Արդարադատության նախարարություն են ներկայացրել պատմական փաստաթուղթ: Համաձայն փաստաթղթի՝ Հայ Կաթողիկե եկեղեցին Ռուսաստանում հայտնի է եղել 18-րդ դարից, եւ նրա համայնքները ոչնչացվել են 1920-ական թվականներին:

Այդ պատճառով Արդարադատության նախարարությունն իրավունք չունենր հաշվի չառնել սույն փաստը, ուստի դատարանի կայացրած որոշումն անօրինական է համարվում, ինչը հակասում է ՌԴ Սահմանադրությանը: Մեշանինսկի շրջանի դատարանը վերանայել ու անօրինական է ճանաչել ՌԴ ԱՆ կայացրած որոշումը եւ պարտադրել է վերանայել Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայ Կաթողիկե եկեղեցու հայցն ու պետական գրանցում տալ հայ կաթոլիկ համայնքին: Ինչ շարունակություն կունենա խնդիրը՝ դեռ պարզ չէ: Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակը, միջպետական համագործակցության առկա ներուժը կարող են օժանդակել համայնքի իրավունքների վերականգնմանը, որը դադարել էր գործել 20-ական թվականներից:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի հայերի շրջանում չկան տարաբաժանումներ դավանանքային հողի վրա: Անկախ նրանից, թե ինչ խնդիրներ են կանգնած նրանց առջեւ, համակեցությունը եւ մարտահրավերներին համընդհանուր ուժերով դիմակայելն առաջնային են դավանական հարցերի համեմատ:

ԴԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուբեն Մելքոնյան

Ներկայումս Թուրքիայի տարածքում գտնվող Դերսիմը տարբեր ժամանակաշրջաններում յուրահատուկ տեղ է զբաղեցրել ինչպես հայերի, այնպես էլ այդ տարածքներում հաստատված զազանների, քրդերի համար: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի՝ Դերսիմը բազմիցս դարձել է ըմբոստների եւ հալածյալների ապաստարան: Կան տարածված ավանդազրույցներ, որ հենց այդ լեռնոտ գավառում է ապաստանել հայերի մի խումբ, որը 4-րդ դարում չի ընդունել քրիստոնեություն: Ավելի ուշ՝ պավլիկյան եւ թոնդրակյան շարժումների ժամանակ նույնպես, Դերսիմն ապաստարան է ծառայել այդ գաղափարների հետեւորդների համար: Աշխարհագրական լեռնոտ դիրքն ազդել է նաեւ այնտեղի բնակչության հոգեկերտվածքի վրա. ըմբոստությունը, խիզախությունը լայն տարածում են գտել Դերսիմում: Հայտնի է նաեւ, որ այդ տարածքներում Օսմանյան կայսրության տիրապետության հաստատումից հետո էլ Դերսիմը շարունակեց պահպանել կիսանկախ դիրքը, որը տարբեր ժամանակներում անհանգստացրել է օսմանյան տիրակալներին:

Հարկ է նկատել, որ բացի բնիկներից՝ հայերից, Դերսիմում բնակություն են հաստատել նաեւ զազաներ, քրդեր, որոնց շրջանում բավական տարածված է ալեւիականությունը, ինչը ենթադրում է հանդուրժողականություն այլակրոնների նկատմամբ: Կրոնադավանամաքային այս պատկանելությունը զգալիորեն տարբերել է ալեւի զազաներին կայսրության մյուս շրջանների մուսուլմաններից, որոնց մոտ հաճախ գերիշխել է կրոնական մոլեռանդությունը:

Հարեւան ալեւի զազանների հետ դերսիմցի հայերի բարիդրացիական հարաբերություններ ունենալու հանգամանքը որոշակի դեր է խաղացել նաեւ 1915թ. Հայոց ցեղասպանության ժամանակ. տարբեր աղբյուրներում վկայված է, որ աքսորի եւ կոտորածի տարիներին մոտ 30-40 հազար հայեր ինչպես Դերսիմի տարբեր շրջաններից, այնպես էլ հարակից այլ հայաբնակ գավառներից ապաստանել են ալեւի զազանների մոտ: Հարկ է նկատել, որ տեղի ալեւի զազա ցեղապետերը հայերին փրկելու քայլին են դիմել նաեւ իրենց դավանանքի՝ ալեւիականության պատճառով, որն առավելապես մարդակենտրոն է: Սակայն ավելորդ չէ նաեւ հավելել, որ այդ ժամանակ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ դերսիմցի

քուրդ, զազա մի շարք ցեղախմբեր համագործակցել են օսմանյան իշխանությունների հետ եւ մասնակցել հայերի սպանոյին ու նրանց գույքի թալանին: Պահպանվել են նաեւ դերսիմցի զազա ցեղապետերի նենգ դավաճանության մասին վկայություններ:

Ինչեւէ, Դերսիմի լեռնային գյուղերում ապաստանած հայերի հարցը դարձել է օսմանյան կենտրոնական իշխանությունների եւ տեղի ցեղապետերի միջեւ քննարկման ու բանակցությունների թեմա, քանի որ թուրքական իշխանությունները պահանջել են ալեւի ցեղապետերից իրենց հանձնել հայերին: Այս պահանջը լուրջ խնդիր է առաջացրել հենց ալեւիների համար, քանի որ նրանք կանգնել են բարդ երկընտրանքի առաջ՝ կենտրոնական իշխանությունների կարգադրության եւ իրենց դավաճանքի սկզբունքների միջեւ: Եվ շատ հաճախ կենտրոնական իշխանությունների հրամանը մերժվել է, իսկ երբ պահանջները սաստկացել են, ալեւի ցեղապետերն ապաստանած հայերի մի մասին օգնել են փախչել Արեւելյան Հայաստան կամ Ռուսաստան:

Սակայն այս ամենից զատ, արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ալեւիների մոտ ապաստանած հայերը ստիպված (հաճախ արտաքուստ) փոխել են իրենց անունը, կրոնը եւ ներկայացել որպես ալեւի զազա: Այս հանգամանքը նաեւ թույլ է տվել ցեղապետերին՝ կենտրոնական իշխանություններին ներկայացնել, որ կասկածյալները ոչ թե հայ են, այլ ալեւի զազա: Ահա հենց այս եղանակով էլ բազմահազար հայեր առերեւույթ կրոնափոխ են եղել, դարձել ալեւի. նրանց մի մասը կարողացել է գաղտնի կամ բացահայտ շարունակել ազգային-կրոնական սովորույթները, իսկ մի մասն էլ ձուլվել է ալեւիական ինքնության մեջ: Կարելի է նկատել, որ շրջապատող ալեւի բնակչության ոչ այնքան մոլեռանդ դիրքորոշումը թույլ է տվել, որ մինչեւ մեր օրերը դերսիմցի հայերը եւ նրանց սերունդները, ցանկության դեպքում, պահպանեն հայկական ինքնության որոշակի տարրեր, սակայն, այնուամենայնիվ, զերիշխող տարրը որոշիչ ազդեցություն է ունեցել հայության սերունդների ինքնագիտակցության վրա:

Այս իմաստով ուշագրավ օրինակ է հայտնի հայկական Միրաքյան ցեղախումբը, որի մի մասը, հեռանալով Դերսիմից, հաստատվել է տարբեր երկրներում, այդ թվում եւ Հայաստանում, սակայն նրանց մի հատվածն այսօր էլ շարունակում է ապրել Դերսիմում՝ «Միրաք աշիրեթի» անվան տակ: Ցավոք, ինչպես նշում են վերջերս նրանց այցելած մասնագետները, Միրաքյանների այսօրվա սերունդների մեջ պահպանվել է լոկ հիշողություն իրենց հայկական ծագման մասին: Ուշագրավ է, որ այսօր էլ Միրաքների մեջ շարունակում է հպարտության

աղբյուր լինել իրենց նախնիների՝ Միրաքյանների ըմբոստ եւ ռազմատենչ կերպարը, որը եւս ստիպում է նրանց սերունդներին խոստովանել իրենց ծագման մասին:

Դերսիմում, հայկական դարավոր ներկայության, ինչպես նաեւ 1915-ին բազմահազար հայերի այնտեղ ապաստանելու արդյունքում, հայկական մշակույթի, սովորույթների, հայոց լեզվի որոշ տարրեր փոխանցվել են զազայական միջավայր: Օրինակ՝ զազայերեն լեզվում ակնհայտ է հայերեն փոխառյալ բառերի որոշակի շերտ, զազայական մի շարք տոներ, սովորույթներ իրենց մեջ ունեն հայկական գծեր, մինչեւ այսօր էլ Դերսիմում ժողովրդի շրջանում օգտագործվում են հին հայկական մի շարք տեղանուններ: Սակայն այս ամենով հանդերձ, պետք է նշել նաեւ, որ Թուրքիայի հակահայկական քարոզչությունը լիովին անհետեւանք չի մնացել նաեւ Դերսիմում, եւ կան փաստեր, որոնք վկայում են, որ անգամ ալեւիական միջավայրում միշտ չէ, որ բացահայտ հայ լինելը խրախուսվել է:

Դերսիմի նկատմամբ Օսմանյան կայսրության ունեցած խտրական եւ թշնամական վերաբերմունքը շարունակվեց եւ էլ ավելի մեծ ծավալներ ստացավ արդեն հանրապետական Թուրքիայում. Դերսիմի կիսանկախ գոյությունը քեմալական իշխանությունների համար դարձավ մտահոգիչ խնդիրներից մեկը:

Արդեն 1930-ական թվականներին քեմալական իշխանությունները ձեռնամուխ եղան Դերսիմի խնդրի արմատական լուծմանը. լուծման մեթոդները մնացին նույն երիտթուրքականը: 1937–1938թթ. Դերսիմում պետության կողմից կազմակերպվեց ցեղասպանություն, որի ժամանակ կիրառվեցին ճիշտ այն մեթոդները, որոնք եղել էին Հայոց ցեղասպանության ժամանակ: Ըստ տարբեր աղբյուրների, Դերսիմի ցեղասպանության տարիներին կոտորվել է շուրջ 70-90 հազար մարդ, բացի այդ, ողջ բնակչությունն աքսորվել է Թուրքիայի տարբեր շրջաններ: 1937–1938թթ. Դերսիմի ցեղասպանության խնդիրը կարոտ է լուրջ ուսումնասիրության, սակայն մենք կցանկանայինք անդրադառնալ դրա մի դրվագին: Արդեն հստակ կարող ենք ասել, որ Դերսիմի ցեղասպանության ժամանակ թուրքական իշխանությունների հիմնական եւ կարեւոր թիրախներից մեկը եղել են 1915-ին այնտեղ ապաստանած հայերը: Ի հայտ եկած բազմաթիվ փաստեր, ականատես-վերապրողների վկայություններ գալիս են ապացուցելու այն, որ դերսիմցի հայերի համար 1937–1938-ը Հայոց ցեղասպանության շարունակությունն էր, որի ժամանակ զոհ գնաց 1915-ին փրկված եւ այնտեղ ապաստանած հայերի մի մասը: Նկատենք նաեւ, որ թուրքական իշխանությունները Դերսիմի ցեղասպանությանը մասնակցած

զորքին, որպես զազաներին կոտորելու հիմնավորում, նշել են այն, որ նրանք ժամանակին ապաստան են տվել հայերին:

Ներկայումս Թուրքիայում ընթանում է մի հետազոտություն, որի շրջանակներում հավաքվում են Դերսիմի ցեղասպանությանը վերաբերող բանավոր պատմությունները, եւ, քանի որ թուրքական պաշտոնական փաստաթղթերում այդ դեպքերի մասին օբյեկտիվ տվյալներ շատ դժվար է գտնել, ուստի ականատես-վերապրողների եւ այդ ամենին մասնակիցների խոստովանություններն աղբյուրագիտական արժեք ունեն: Այսպես, այդ կոտորածին մասնակցած թուրքական բանակի մի զինվոր խոստովանել է, որ իրենց հրամանատարները զազաներին կոտորելու հրաման տալուց առաջ դա հիմնավորել են հետեւյալ կերպ. *«Սրանք հայերին ապաստան տվողներն են, եւ դրա համար էլ նրանց պետք է վերացնենք»:*

Հետաքրքիր է եւ չափազանց ուշագրավ, որ մեր օրերում դերսիմցի հայերի եւ նրանց սերունդների մեջ սկսվել է ինքնության կարելորման, երբեմն ինքնության վերադարձի գործընթաց: Ստորեւ մեջբերենք դերսիմցի հայերի ներկայիս վիճակի վերաբերյալ մի ուշագրավ տեղեկություն, որը գրի է առնվել 2009թ. Դերսիմում տեղի ունեցած «Մնծուրյան 9-րդ փառատոն»-ի ժամանակ: Այսպես, Մնծուրյան փառատոնին մասնակցած «Ակօս» թերթի աշխատակից, պոլսահայ Բագրատ Էստուկյանը նշում է. *«Արդէն իսկ հարազատութիւն կը զգայի քաղաքի ժողովուրդին նկատմամբ: Նախապէս կարդացածներէս գիտէի, որ բաւական շատ էին իր նախնիներուն մէջ հայկական ծագում ունեցողները: Բայց այդ համեմատութիւնը երբեք չէի կարծեր, որ այսքան բարձր կըլլայ: ...Այլ զարմանալի երեւոյթ մըն ալ այն է, որ ոչ ոք կը փորձէ ինքնութիւնը թաքցնել: Ժողովուրդը համակերպված է Ալեւի կրօնքին, Քիւրտ քաղաքական շարժումներուն եւ Հայ ինքնութեան ամբողջականութեամբ ներկայանալու: Մեզ` պոլսահայերուս համար, անհասկնալի այս համադրութիւնը իբրեւ բնական երեւոյթ տեղ գտած է Տերսիմի ժողովուրդին մօտ: ...Անատոլուի տարածքին կարելի է հանդիպիլ հայու բեկորներու: Իսկ Դերսիմի մէջ կարելի է հանդիպիլ հայերու: Ո՛չ թաքուն, ո՛չ ծպտուած, ո՛չ ալ ազգուրաց, այլ` պարզապէս ուրոյն, իւրահատուկ»:* Դերսիմցի հայերի մոտ քրիստոնեւոյթան հետքերի յուրօրինակ պահպանման եւ դրսեւորման մասին է վկայում Բագրատ Էստուկյանի փոխանցած մեկ այլ ուշագրավ տեղեկությունը. *«Մեկը վերնաշապիկի տակից հանեց շղթայով խաչը եւ ինձ ցույց տալով` ասաց. «Մխալ մի հասկացիր, ես աթէիստ եմ, իսկ ալեւիականությունը իմ մշակույթն է, սակայն այս խաչը խորհրդանիշն է նրա, որ ես Շողակաթ տատիկի թոռն եմ, Համբարձումյանների գերդաստանի զավակը»:*

2010թ. օգոստոսին հայտնի դարձավ, որ ներկայումս դերսիմցի հայերի մի խումբ նախաձեռնում է ստեղծել հասարակական կազմակերպություն, որը նպատակ ունի նրանց շրջանում սկսված՝ ինքնությունը վերագտնելու գործընթացը որակական այլ մակարդակի հասցնել: Հասարակական կազմակերպությունը պետք է ուսումնասիրություններ կատարի Դերսիմի հայերի մշակույթի, պատմության, հավատքի, լեզվի վերաբերյալ: Այդ ամենի նախաձեռնող խմբի ղեկավարն է դերսիմցի հայ Սելահեթթին Գյուլթեքինը, որը փոխել է նաև անունը՝ դառնալով Միրհան Գյուլթեքին: Ինչպես նշում է Միրհանը, կազմակերպության նպատակներից է, որպեսզի դերսիմցի հայերը եւ նրանց սերունդները վերադառնան իրենց արմատներին, ապրեն առանց իրական ինքնությունը թաքցնելու, կրեն ոչ թե թուրքական կամ քրդական, այլ հայկական անուններ, տեր կանգնեն Դերսիմի հայկական եկեղեցիներին, հուշարձաններին, գերեզմանոցներին, պաշտոնապես վերականգնեն բազմաթիվ գյուղերի հին հայկական անունները: *«Դերսիմցի հայերը թող տեր կանգնեն իրենց ինքնությամբ եւ մշակույթին: Թող վերադառնան արմատներին, երեխաներին ուղարկեն եկեղեցիներ: Այս ամենի համար մենք պետք է կազմակերպություն ունենանք, եւ ես կոչ եմ անում բոլոր հայերին՝ առաջին հերթին դերսիմցիներին, աջակցել այս կազմակերպությանը»*,–նշում է Միրհան Գյուլթեքինը:

Վերջում հիշեցնենք նաև, որ նմանատիպ մի հասարակական կազմակերպություն են ստեղծել Թուրքիայում բնակվող սասունցի հայերը եւ փորձում են աշխատանքներ տանել Սասունի հայկական եկեղեցիների, սրբավայրերի պահպանության ուղղությամբ: Անշուշտ, թուրքական պետական քաղաքականության պայմաններում այդ կազմակերպությունները գործունեության լայն դաշտ չեն կարող ունենալ, սակայն Թուրքիայի հայության տարբեր խմբերի ինքնակազմակերպվելու փորձերն ուշարժան են եւ, միեւնույն ժամանակ, ի ցույց են հանում ազգային ինքնությունը վերագտնելու հետ կապված տարբեր ու հետաքրքիր զարգացումներ:

ԻՐԱՔԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԸ ԳՈՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԱՋ¹ *Արաքս Փաշայան*

Իրաքահայ համայնքը կազմավորվել է Զայոց ցեղասպանությունից փրկված տարագիրներով, եղել Միջին Արևելքի ավանդական եւ բարգավաճ համայնքներից մեկը: Վերջին երեսուն տարիներին իրաքահայերը երեք պատերազմ են տեսել: Մինչեւ 2003-ի պատերազմն իրաքահայերի թիվը կազմել է 22.000-25.000, որից շուրջ 15-17.000-ը բնակվել է Բաղդադում, մնացյալը՝ հիմնականում Բասրա, Մոսուլ, Քիրքուք եւ հյուսիսային սահմանամերձ Ջախո քաղաքներում: Ներկայումս հայերի թիվը մոտ 12.000-ի շրջանակներում է:

Իրաքահայերը հիմնականում ներկայացված են լուսավորչական համայնքով (կան փոքրաթիվ կաթոլիկներ, Բաղդադում գործում է Զայ Կաթոլիկե եկեղեցի): Իրաքի Զայոց թեմն էջմիածնական է: Թեմի առաջնորդը ներկայումս Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանն է, որը վարում է համայնքի գործերը եւ ներկայացնում համայնքը պետության առաջ: Մայր եկեղեցին Բաղդադի Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է, որը Զայ Առաքելական եկեղեցու Իրաքի թեմի աթոռանիստն է:

1932-ից մինչեւ օրս համայնքը գործում է ըստ Կանոնադրության (կան Ազգային սահմանադրության), որը վավերացված է պետության կողմից: Զամայնքի բարձրագույն իշխանությունն ազգային կենտրոնական վարչությունն է, որն ընտրվում է չորս տարին մեկ եւ ունի իր ատենապետը: Վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2010թ. մայիս – հունիս ամիսներին: Վարչության ատենապետ է վերընտրվել Պարույր Զակոբյանը: Ազգային կենտրոնական վարչության ընտրությանը, որպես կանոն, հաջորդում են թաղական խորհուրդների ընտրությունները:

Իրաքում հայապահպանությանը մեծ հարված հասցրեց 1968թ. իշխանության եկած «Բասա» կուսակցության՝ էթնիկ փոքրամասնությունների հարցում տարվող քաղաքականությունը, որի հետեւանքով մասնավորապես՝ 1972-ից, հայկական ազգային վարժարանները պետականացվեցին: Մեծ ջանքեր պահանջվեցին, որպեսզի գոնե հնարավոր դառնա հայերենի եւ կրոնի ուսուցումն արդեն պետական դպրոցներում: Չնայած ավտորիտար վարչակարգի առկայությանը՝ Սադամ Զուեյնի իշխանության շրջանում (1979–2003) հայերն ապրել են ապահով եւ բարեկեցիկ

կյանքով: Իրաքահայերը քաղաքական կյանքում որեւէ դերակատարում չեն ունեցել, ինչը բնորոշ է Միջին Արեւելքի հայկական գաղթօջախներին (բացառությամբ՝ Լիբանանի):

Իրաքահայերը զգալիորեն տուժեցին իրանա-իրաքյան եւ իրաքաքուվեյթյան պատերազմների տարիներին, սակայն ամենածանր հարվածը համայնքը կրեց 2003–2010թթ. ընկած ժամանակահատվածում:

2003թ. ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացմամբ սկիզբ առած իրավիճակը երկրում ստեղծեց քաոս եւ անիշխանություն, որից տուժեցին ողջ Իրաքի քաղաքացիները՝ անկախ դավանական կամ էթնիկ պատկանելությունից: Սակայն մասնավորապես ծայրահեղ արմատական իսլամական խմբավորումներն իրենց պայքարի թիրախ էին դարձրել քրիստոնյաներին, այդ թվում նրանց, ովքեր որեւէ կերպ համագործակցում էին ամերիկացիների կամ կոալիցիոն ուժերի հետ: Երկրում ստեղծված իրավիճակը նրանք դիտարկում էին որպես պայքար իսլամական եւ քրիստոնեական աշխարհի՝ Արեւմուտքի միջեւ: Պատերազմի տարիներին բռնություններ իրականացվեցին իրաքցի (այդ թվում՝ հայ) բազմաթիվ քրիստոնյաների, քրիստոնյա հոգեւորականների եւ մի շարք (այդ թվում հայկական) եկեղեցիների նկատմամբ: Մշտական էին դարձել փրկագին վճարելու դիմաց մարդկանց առեւանգելու եւ ահաբեկչության դեպքերը:

Պատերազմի տարիներին Իրաքի հայ համայնքը էական վերածելումների ենթարկվեց, շեշտակիորեն կրճատվեց համայնքի անդամների թիվը, կասկածի տակ դրվեց նրա հետագա գոյությունը: Անվտանգության երաշխիքների բացակայության եւ երկրում սկիզբ առած քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետեւանքով հազարավոր իրաքահայեր հեռացան երկրից՝ հաստատվելով Ամերիկայում, Եվրոպայում, Միջին Արեւելքում (հիմնականում՝ Սիրիա, Յորդանան, Լիբանան), Հայաստանում:

Հատկանշական է, որ բացի արտագաղթից, Իրաքում նշված շրջանում սկիզբ առավ նաեւ ներքին միգրացիա: Հայերը տեղաշարժվեցին եւ շարունակում են տեղաշարժել դեպի հյուսիս՝ Քուրդիստան, որտեղ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական վիճակը բավական կայուն է: Չնայած առկա դժվարություններին, համայնքը շարունակում է իր գոյությունը: Այժմ իրաքահայերը հիմնականում կենտրոնացած են Բաղդադում, որտեղ գործում են հայկական չորս եկեղեցի եւ ազգային հինգ միություն՝ Բաղդադի երիտասարդացը, Իրաքի բարեգործական ընդհանուր միությունը, Բարեգործականի մարզական ակումբը, ՀՍԸՄ-ն, Իրաքահայ տիկնանց միությունը:

2003-ից հետո՝ 2004–2005-ին, հայերն Իրաքում փորձեցին վերա-

կանգնել ազգային վարժարանի ինստիտուտը: Արդյունքում՝ Բաղդադում բացվեց միակ հայկական ազգային վարժարանը, որը ներկայումս մոտ 130 աշակերտ ունի: Դպրոցը կից է մայր եկեղեցուն: Իրաքահայ ուսուցչուհիները ժամանակ առ ժամանակ վերապատրաստվում են Չայաստանում:

Իրաքահայերը եկեղեցիներ, կրթական, մարզական եւ ազգային այլ հաստատություններ ունեն նաեւ Բաղդադից դուրս՝ հիմնականում Բասրայում եւ հյուսիսային քրդաբնակ շրջաններում՝ Քիրքուք, Էրբիլ, Սուլեյմանիա, Դոհուք, Ջախո քաղաքներում, Ավգրուկ եւ Չավրեզ գյուղերում: Սեկական հայկական եկեղեցի կա Բասրայում, Քիրքուքում, Ջախոյում (Ս.Աստվածածին), Ավգրուկում (Ս.Վարդան): Երկու տարի առաջ, 2008-ին, եկեղեցի հիմնվեց Դոհուքում (Ս.Ներսես Շնորհալի), ծրագրվում է նոր եկեղեցիներ կառուցել Էրբիլում եւ Չավրեզքում: Որոշակիորեն անմխիթար է վիճակը Մոսուլում: Այստեղ կա երկու հայկական եկեղեցի, որոնցից մեկը կառուցվել է 1857-ին, իսկ մյուսը նորակառույց էր, որը նախքան օծվելն ու բացվելը՝ 2004-ին պայթեցվեց մի խումբ զինյալների կողմից: Չայերով է սկսել բնակեցվել Մոսուլի մոտ գտնվող քրիստոնեական Ալ-Կոուշ բնակավայրը: Բացի այդ, սկսվել է հայերի հոսքը դեպի Էրբիլ, որի հարեւանությամբ է գտնվում հայ բնակչություն ունեցող Այնքավա բնակավայրը:

Փաստորեն, հայաբնակ բնակավայրերի ձեւավորման գործընթաց է սկսվել քրդաբնակ շրջաններում, որոնք անվտանգ են եւ հայապահպանության տեսանկյունից նոր նշանակություն են ձեռք բերել: Ասվածի ապացույցն է Չավրեզքը, որ հիմնել է վասպուրականցի գեներալ Լեւոն փաշա Շաղոյանը, որը կռվել է Օսմանյան կայսրության դեմ: 1920-ականների, արդեն Չայոց ցեղասպանությունից հետո, նա այս շրջանը բնակեցրել է վանեցիներով, սակայն 1970-ականների վերջերին պետական եւ քրդական զորամիավորումների միջեւ բախումների հետեւանքով գյուղից հայ բնակչությունը դուրս է բերվել: Ընդհանրապես, հյուսիսային՝ սահմանամերձ շրջանում գտնվող շատ բնակավայրեր դատարկվել են: Չավրեզքը վերահիմնվել է 2005թ.՝ քրիստոնյա գործարար, իրաքյան Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության անդամ Սարգիս Աղաջանի աջակցությամբ, որն այդ շրջանում իրաքյան Քուրդիստանի ֆինանսների նախարարն էր: Նրա շնորհիվ Չավրեզքում կառուցվել է 115 տուն: Վերաբնակվողները հիմնականում քաղաքաբնակներ են՝ Բաղդադից, Բասրայից, Մոսուլից: Ի պատիվ Սարգիս Աղաջանի, Աղաջանյան է կոչվել Մոսուլի մոտ գտնվող մի բնակավայր, որտեղ նույնպես բնակություն են հաստատել հայ ընտանիքներ:

Իրաքի հայաբնակ գյուղական բնակավայրերից թերեւս ամենանշանավորն ամբողջությամբ քրդախոս հայերով բնակեցված Ավգրուկն է: Ինչպես նշեցինք, գյուղն ունի եկեղեցի, նաեւ՝ դպրոց, թաղական խորհուրդ, ազգային միություն: Ավգրուկի հարեւանությամբ են գտնվում Սումայլ եւ Շիքանդալ քրիստոնեական բնակավայրերը, որտեղ ասորիների կողքին ապրում են նաեւ հայեր: Հատկանշական է, որ Ավգրուկում ապրող հայերը թեւ իրենց կենցաղավարությամբ ու մշակույթով ավելի մոտ են քրդերին, սակայն աչքի են ընկնում հայկական բարձր ինքնագիտակցությամբ, ամուր կառչած են ազգային եւ կրոնական ավանդույթների: Նշենք, որ քրդախոս են նաեւ Ջախո քաղաքի հայերը, որոնք այս շրջանը բնակեցրել են 1930-ականներից: Նրանք նույնպես հայկական ավանդույթների կրողներ են:

Հատկանշական է, որ իրաքյան Քուրդիստանի տարածաշրջանային՝ 111 տեղանոց խորհրդարանի անդամ է (2009-ից) հայազգի Արամ Շահեն Բաքոյանը՝ ավգրուկցի, որը երկար տարիներ է, ինչ անդամագրված է Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությանը, որի ներկայիս առաջնորդը Մասուդ Բարզանին է:

Իրաքահայ համայնքի հարաբերությունները պետության հետ, որպես կանոն, բարիդրացիական են՝ սկսած թագավորական շրջանից, ներառյալ Սադամ Հուսեյնի եւ մասնավորապես ներկայիս շրջանը, երբ իշխանական թելում ազդեցության լծակներ ձեռք բերեցին շիաները: Ներկայումս իրաքահայ համայնքն ակտիվորեն համագործակցում է կրոնի հարցերով զբաղվող պետական մարմնի հետ: Հայ համայնքը բավական լավ փոխհարաբերություններ ունի թե՛ սուննի, թե՛ շիա համայնքների եւ նրանց ղեկավարների հետ: Բավական բարիդրացիական են հարաբերություններն էթնիկ այլ խմբերի, այդ թվում՝ քրդերի եւ թուրքմենների հետ:

Իրաքահայերն ակտիվ շփման մեջ են նաեւ քրիստոնյա համայնքների հետ: Հատկանշական է, որ չնայած Իրաքում հայերը քրիստոնյաների մեջ թերեւս ամենափոքր թիվն են կազմում, Քրիստոնյա համայնքների խորհրդի քարտուղարը Հայոց թեմի առաջնորդ Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանն է: Քրիստոնյաների ամենամեծ խումբը քաղղեացիներն են, հետո՝ ասորիները: Առհասարակ, Իրաքում են գտնվում հնագույն քրիստոնեական եկեղեցիները, իսկ քրիստոնյաները կազմում են ներկայիս Իրաքի բնակչության մոտ երեք տոկոսը: Մինչեւ 2003թ. Իրաքի քրիստոնյաները հաշվվում էին մոտ մեկ միլիոն, սակայն արտագաղթի պատճառով նրանց թիվն էականորեն նվազել է: Իրաքի քրիստոնյաները ժամանակ առ ժամանակ բողոքի ակցիաներ են կազմակերպում՝ իշխանություններից պահանջելով ուժեղացնել երկրի անվտանգության համակարգը:

Փաստորեն, ներկայիս իրաքահայ համայնքը ներքին լուրջ փոխոխությունների է ենթարկվում եւ հայտնվել է բարդ իրավիճակում: Աստիճանաբար ավելի ու ավելի դժվար է դառնում ազգային գոյապահպանությունն իսլամական միջավայրում, որը շեշտակիորեն կրոնականացվում է: Ավելի են խորանում սոցիալական խնդիրները, շարունակվում է արտագաղթը: Իրաքահայ համայնքի ազգային կենտրոնական վարչության ատենապետ Պարույր Չակոբյանի կարծիքով՝ իրաքահայերը, ինչպես նաեւ Իրաքի մնացած քաղաքացիները, սպասում են երկրում քաղաքական ճգնաժամի հաղթահարմանը եւ նոր կառավարության ձեւավորմանը, հակառակ դեպքում իրավիճակը վատթարացման կզմա, ինչն էլ կանդրահառնա նաեւ հայ համայնքի վրա:

Չայերի հետագա գոյությունն Իրաքում կապված կլինի այդ երկրում անվտանգության եւ բարեկեցության հաստատման, ինչպես նաեւ էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողական քաղաքականության հեռանկարի հետ: Սակայն մի բան պարզ է. Միջին Արեւելքի, այդ թվում՝ Իրաքի հայ համայնքները վերջին շրջանում, կապված արտաքին ու ներքին տարաբնույթ գործոնների հետ, ազգային գոյապահպանության հարցում կանգնած են լուրջ մարտահրավերների առջեւ:

¹ Հոդվածում առավելապես օգտագործվել են իրաքահայերի Ազգային կենտրոնական վարչության ատենապետ Պարույր Չակոբյանի տրամադրած տեղեկությունները:

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ ԻՐԱՔՈՒՄ

Բենիամին Պողոսյան

2009թ. հունվարին ստանձնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Օբաման հայտարարեց մինչև 2010թ. օգոստոսի 31-ը Իրաքի տարածքից ամերիկյան մարտական ուժերի դուրսբերման որոշման մասին, որից հետո այդտեղ մնալու էր շուրջ 50.000 ամերիկյան զինվոր՝ Իրաքի բանակային ստորաբաժանումների մարտական պատրաստվածության բարձրացմանն աջակցելու նպատակով:

Չնայած 2010թ. ամռան ամիսներին Իրաքում նկատվող ահաբեկչական գործողությունների աճին եւ իրավիճակի աստիճանական ապակայունացմանը (Իրաքի Առողջապահության, Պաշտպանության եւ Ներքին գործերի նախարարությունների համատեղ տվյալների համաձայն՝ 2010թ. հուլիսին Իրաքում սպանվել է 535 եւ վիրավորվել ավելի քան 1000 մարդ, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2008թ. մայիսից ի վեր)՝ ամերիկյան ուժերը հավատարիմ մնացին հաստատված ժամանակացույցին՝ 2010թ. օգոստոսի 31-ին պաշտոնապես հայտարարելով 2003թ. մարտին սկսված «Իրաքի ազատություն» օպերացիայի ավարտի եւ «Նոր արշալույս» գործողության մեկնարկի մասին, որի ընթացքում ամերիկյան ուժերը, մինչեւ Իրաքի տարածքից վերջնական դուրսբերումը, այլեւս չեն մասնակցելու մարտական գործողությունների:

Ամերիկյան մարտական ուժերի դուրսբերումը Իրաքից փաստացի նոր իրավիճակ է ստեղծել երկրում, որը զգալի ազդեցություն կթողնի ոչ միայն ԱՄՆ–Իրաք հարաբերությունների, այլեւ տարածաշրջանային զարգացումների վրա: Իրաքում ձեւավորված նոր իրադրության բաղկացուցիչ մասն է քաղաքական ճգնաժամի առկայությունը: 2010թ. մարտին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո Իրաքի քաղաքական ուժերին դեռեւս չի հաջողվել համաձայնության գալ կոալիցիոն կառավարության ձեւավորման շուրջ: Ընտրությունների ժամանակ հաղթանակ է տարել 2004թ. մայիսից մինչեւ 2005թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում Իրաքի վարչապետի պաշտոնը զբաղեցրած Այադ Ալաուիի «Իրաքիյա» դաշինքը՝ 325 տեղանոց խորհրդարանում ստանալով 91 մանդատ: 89 մանդատ ունի Իրաքի գործող վարչապետ Նուրի ալ Մալիկիի «Օրենքի պետություն» դաշինքը, 70 պատգամավորական մանդատ է ստացել Իրանի ակտիվ աջակցությամբ ձեւավորված «Իրաքի ազգային

դաշինք» խմբավորումը՝ իրանամետ գործիչներ Ամնար ալ Չաքմի եւ Մոքթադա ալ Սադրի գլխավորությամբ: Վերջինս, ամերիկյան ուժերի կողմից իր ենթակայության տակ գտնվող զինված խմբավորումների ջախջախումից հետո, 2007թ. հեռացել էր Իրաքից եւ բնակվում է Իրանի Ղոմ կրոնական կենտրոնում: «Իրաքի ազգային դաշինքի» ձեւավորումը եւ խորհրդարանական ընտրություններում հաջող արդյունքների արձանագրումը վկայում են Իրաքում իրանական ազդեցության աճի մասին, ինչը չի կարող չանհանգստացնել պաշտոնական Վաշինգտոնին:

2010թ. հունիսի սկզբին «Իրաքի ազգային դաշինքի» հետ միավորման մասին հայտարարեց գործող վարչապետ Նուրի Ալ Մալիկիի «Օրենքի պետությունը»: Նորաստեղծ միավորումը ներկայացնում է բացառապես շիաների շահերը, եւ նրա կողմից առաջադրված թեկնածուի՝ վարչապետի պաշտոնում ընտրվելը կարող է հիմք հանդիսանալ սուննի – շիա բախումների վերսկսման համար: Այադ Ալաուի եւս շիա է, սակայն նրա դաշինքը զգալի աջակցություն է վայելում նաեւ սուննիների շրջանում:

Իրանամետ ուժերը չեն սահմանափակվում միայն Նուրի ալ Մալիկիի հետ շփումներով: 2010թ. հուլիսին Սիրիայի նախագահ Բաշար Ասադի միջնորդությամբ Դամասկոսում տեղի է ունեցել Մոքթադա ալ Սադրի հանդիպումը Այադ Ալաուիի հետ: Տարածաշրջանում Իրանի հետ սերտ կապեր ունեցող Սիրիայի ներգրավումն իրաքյան ներքաղաքական գործընթացներում եւս վկայում է ամերիկյան ազդեցության աստիճանական նվազման մասին: Ամերիկյան իշխանություններն ամենաբարձր մակարդակով բազմիցս կոչ են արել իրաքյան քաղաքական կուսակցություններին արագացնել կոալիցիոն կառավարության ձեւավորման գործընթացը, սակայն ակնհայտ է, որ ամերիկյան ուժերի թվաքանակի զգալի նվազման պարագայում ԱՄՆ ազդեցության լծակները որոշակիորեն թուլացել են: ԱՄՆ-ի համար, թերեւս, ամենաձեռնտու տարբերակը Նուրի ալ Մալիկիի եւ Այադ Ալաուիի դաշինքն է, սակայն դրա իրականացումը քիչ հավանական է՝ երկու գործիչների լարված անձնական հարաբերությունների պատճառով:

Իրադարձությունների զարգացման ցանկացած սցենարի պարագայում Իրաքում իրանական ազդեցությունն աստիճանաբար ուժեղանալու է, ինչն իր հերթին նպաստելու է տարածաշրջանում Իրանի դիրքերի ամրապնդմանը: Այս վերջին հանգամանքը կարող է բավականաչափ կարելոր դեր խաղալ տարածաշրջանային զարգացումներում՝ հատկապես հաշվի առնելով Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակը:

Իրաքում ձեւավորված նոր իրավիճակը որոշակի բարդություններ է

ստեղծում նաեւ Թուրքիայի համար: Այս պայմաններում բավականաչափ մեծ է Յուսիսային Իրաքում քրդական անկախ պետության հռչակման հնարավորությունը, ինչը լրջագույն սպառնալիք է Թուրքիայի կենսական շահերի համար: Առայժմ քրդական կուսակցություններն ակտիվորեն չեն միջամտում ներքաղաքական գործընթացներին՝ սպասելով հիմնական ուժերի կողմից վարչապետի պաշտոնի շուրջ համաձայնության կայացմանը, սակայն քաղաքական ճգնաժամի շարունակման պարագայում նրանց շրջանում կարող են ակտիվանալ անկախ պետության հռչակման կողմնակիցները: Ակնհայտ է, որ նախքան ամերիկյան ուժերի վերջնական դուրսբերումն Իրաքից միասնական պետության փլուզմանն ուղղված ակտիվ գործողություններ չեն իրականացվի, սակայն առկա քաղաքական ճգնաժամի ցանկացած ժամանակավոր լուծում պարունակելու է ամերիկյան ուժերի հեռանալուց հետո Իրաքում անկայունության կտրուկ աճի սպառնալիք: Ընդ որում, անկախություն կարող են հռչակել ոչ միայն քրդերը, այլև շիաները, որոնք հիմնականում կենտրոնացած են երկրի հարավային շրջաններում:

Յուսիսային Իրաքում քրդական անկախ պետության ստեղծումը լրջորեն անհանգստացնում է թուրքական իշխանություններին: Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ վերջին երկու տարիների ընթացքում որոշակիորեն բարելավվել են Թուրքիայի հարաբերությունները Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարության հետ: Եթե մինչեւ 2008թ. պաշտոնական Անկարան խուսափում էր քրդական ինքնավարության կառավարության հետ ուղղակի շփումներից, ապա 2008թ. սկսած՝ իրավիճակը սկսել է փոխվել: 2008թ. հոկտեմբերին Բաղդադում կայացավ այդ ժամանակ վարչապետ Էրդողանի արտաքին հարաբերությունների գծով խորհրդականի պաշտոնը զբաղեցնող Ահմեթ Դավութօղլուի հանդիպումը քրդական ինքնավարության նախագահ Մասուդ Բարզանիի հետ: Դա վերջին չորս տարիների ընթացքում թուրք բարձրաստիճան պաշտոնյայի եւ Բարզանիի միջեւ կայացած առաջին ուղղակի շփումն էր: 2009թ. մարտին Իրաք կատարած այցելության շրջանակներում Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը հանդիպեց քրդական ինքնավարության կառավարության ղեկավար Նեչիրյան Բարզանիի հետ: Աշխուժացել են նաեւ քրդական ինքնավարության եւ Թուրքիայի միջեւ առկա տնտեսական հարաբերությունները: Քրդական ինքնավարությունում վաճառվող ապրանքների ութուն տոկոսն արտադրված է Թուրքիայում: Յուսիսային Իրաքում գործունեություն են ծավալել շուրջ 1200 թուրքական ընկերություններ, որոնք հիմնականում ընդգրկված են շինարարության եւ նավթի արդյունահանման ոլորտներում:

Քրդական ինքնավարության ղեկավարությունը եւս շահագրգռված է Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմամբ՝ հատկապես հաշվի առնելով քրդերի նկատմամբ ոչ բարեկամաբար տրամադրված Իրանի տարածաշրջանային ազդեցության ուժեղացումը, շիաների կողմից վերահսկվող Իրաքի կենտրոնական կառավարության աստիճանական հզորացումը եւ քրդերի հիմնական դաշնակցի՝ ԱՄՆ-ի աստիճանաբար թուլացող դիրքերը:

Այնուամենայնիվ, չնայած Թուրքիայի եւ քրդական ինքնավարության միջեւ վերջին երկու տարիների ընթացքում նկատվող հարաբերությունների բարելավմանը, ակնհայտ է, որ Իրաքի փլուզման եւ անկախ քրդական պետության հռչակման պարագայում Թուրքիան հարկադրված կլինի լուրջ քայլեր կատարել սեփական տարածքում բնակվող քրդերի շրջանում անջատողական ձգտումների աճը կանխելու ուղղությամբ՝ ընդհուպ մինչեւ Յուսիսսային Իրաք գինված ներխուժման իրականացումը:

Իրաքի շուրջ ստեղծված իրավիճակի հետագա զարգացումներում Թուրքիայի տեսակետից չափազանց կարեւոր է Քիրքուքի ճակատագիրը: Շուրջ մեկ միլիոն բնակչություն ունեցող բազմազգ (այստեղ բնակվում են քրդեր, արաբներ, թուրքմեններ եւ ասորիներ) քաղաքի մերձակայքում են գտնվում Իրաքի առավել խոշոր նավթահանքերը, ինչն էլ ավելի է մեծացնում քաղաքի հետագա ճակատագրի շուրջ առկա լարվածությունը:

Դեռեւս 1970-ական թվականներին Սադամ Յուսեյնը Քիրքուքից արտաքսել է շուրջ 600.000 քրդերի՝ նրանց փոխարեն վերաբնակեցնելով արաբների: 2003թ. Յուսեյնի վարչակարգի տապալումից հետո Յուսիսսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարությունը քայլեր է ձեռնարկում Քիրքուքից վտարված քրդերին այնտեղ վերաբնակեցնելու ուղղությամբ: Քիրքուքի նկատմամբ քրդական ինքնավարության վերահսկողության հաստատումը զգալիորեն կավելացնի ինքնավարության եկամուտները եւ կնպաստի անկախ պետության հռչակման կողմնակիցների թիվը: 2009թ. հունիսի 24-ին քրդական ինքնավարության խորհրդարանի կողմից հավանության արժանացած նոր սահմանադրության նախագիծը քրդական ինքնավարության մաս է հռչակում ոչ միայն Քիրքուքը, այլեւ Նինվեի եւ Դիյալայի նահանգները: Քիրքուքի նկատմամբ վերահսկողության հաստատումը կարող է լրջորեն սրել Թուրքիայի հարաբերությունները քրդական ինքնավարության հետ եւ հավելյալ անկայունության աղբյուր դառնալ:

Յուսիսսային Իրաքում քրդական անկախ պետության հռչակման հեռանկարը զգալի ազդեցություն ունի նաեւ թուրք-իսրայելական հարաբերությունների վրա: Իսրայելը հետեւողականորեն մեծացնում է իր

ազդեցությունը քրդական ինքնավարությունում՝ զգալի ներդրումներ կատարելով քրդական տնտեսության տարբեր հատվածներում: Քրդական անկախ պետության ստեղծման հնարավորությունը Թուրքիայի վրա ազդելու Իսրայելի լծակներից մեկն է: Իրաքում քաղաքական անկայունության երկարաժամկետ պահպանումը կնպաստի քրդական ինքնավարությունում իսրայելական ազդեցության մեծացմանը:

2011թ. դեկտեմբերին Իրաքի տարածքից ամերիկյան ուժերի ամբողջական դուրսբերումից հետո Իրաքում անկայունության հետագա աճի հավանականությունը բավականաչափ մեծ է: Անկայունության աճի պատճառ կարող է դառնալ ինչպես սուլենի–շիա հարաբերությունների սրումը, այնպես էլ կենտրոնական կառավարության՝ Իրաքի քրդաբնակ տարածքներում սեփական ազդեցության ավելացմանն ուղղված գործողությունները: Դեռևս լուծված չէ նաև նավթի վաճառքից ստացվող եկամուտների բաշխման խնդիրը, որը եւս կարող է իրավիճակի ապակայունացման պատճառ դառնալ:

Ակնհայտ է, որ ամերիկյան իշխանություններին այդպես էլ չհաջողվեց Իրաքում քիչ թե շատ կայուն քաղաքական համակարգ ձևավորել: Չնայած կատարված միլիարդավոր դոլար ներդրումներին, լուծված չեն նաև սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրներ: Իրաքյան բնակավայրերի մեծ մասն էլեկտրաէներգիա է ստանում օրական 4-6 ժամ, զգալի դժվարություններ կան նաև ջրամատակարարման, առողջապահության, կրթության ոլորտներում: Սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներն իրավիճակի ապակայունացման հավելյալ վտանգներ են ստեղծում, որոնք միավորվելով քաղաքական բնույթի դժվարությունների հետ՝ կարող են հանգեցնել իրավիճակի հետագա վատթարացմանը:

ԹՈՒՐՔԻԱ – ՔԿԿ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ **Հայկ Գաբրիելյան**

2010 թվականի գարնանը ՔԿԿ-ն հայտարարեց, որ միակողմանիորեն չեղյալ է հայտարարում 14 ամիս տեւած զինադադարը եւ հունիսի 1-ից ռազմական գործողություններ է ձեռնարկելու թուրքական բանակի դեմ: Իր այդ քայլը ՔԿԿ-ն պատճառաբանեց նրանով, որ Թուրքիան շարունակում է թշնամական գործողություններ իրականացնել քրդերի հանդեպ: Չպետք է մոռանալ, որ մայիսին թուրքական օդուժը ռմբակոծեց Հյուսիսային Իրաքում գտնվող քուրդ անջատողականների դիրքերը: Ձինադադարը չեղյալ հայտարարելուց հետո ՔԿԿ-ն որդեգրեց նոր մարտավարություն, ըստ որի՝ հարձակումների պետք է ենթարկվեին թուրքական զորամասերը: Ողջ հունիս ամիսը թուրքական մամուլը ողողված էր ՔԿԿ հարձակումների ու թուրքական ուժային կառույցների կորուստների շուրջ լուրերով: Այս միտումը պահպանվեց նաեւ հուլիս ամսին եւ շարունակվեց մինչեւ օգոստոսի կեսերը:

Քուրդ զինյալները հիմնականում հարձակումներ էին գործում թուրքական զորամասերի, պարեկություն իրականացնող պահակախմբերի, ոստիկանատների, զինվորական ու ոստիկանական ավտոշարայունների վրա: Նրանք ճանապարհներին տեղադրում էին ականներ, որոնց վրա պայթում էին թուրք զինծառայողներին կամ ոստիկաններին փոխադրող տրանսպորտային միջոցները: Ականապատումից զերծ չեն մնացել երկաթգծերն ու խողովակաշարերը: Օգոստոսի 2-ին Դիվրիդի եւ Էրզինջան քաղաքները միմյանց կապող երկաթգծի վրա տեղադրված ականից պայթել է մարդատար եւ բեռնատար վագոններից բաղկացած գնացքը, ինչի արդյունքում 8 վագոն շրջվել է, սակայն զոհեր եւ վիրավորներ չեն գրանցվել:

Հուլիսի 21-ին քուրդ զինյալները Թուրքիան եւ Իրանը միմյանց կապող Ադրը նահանգի Դոդուբայազըթ քաղաքի մոտ պայթեցրել են «Թավրիզ–Էրզրում (Անկարա)» գազամուղի թուրքական հատվածը: Պայթյունի արդյունքում 10 օրով դադարեցվել է իրանական գազի մուտքը Թուրքիա: Միջին հաշվարկով Իրանն օրական դրանով Թուրքիա է առաքում 23 միլիոն խորանարդ մետր գազ: Ստացվում է, որ քրդերի այս քայլը միաժամանակ հարված հասցրեց եւ Թուրքիային, որը հանդիսանում է իրանական գազի խոշորագույն ներկրողը, եւ Իրանին, որն էներգետիկ ոլորտում Թուրքիայի երկրորդ խոշոր գործընկերն է

(Ռուսաստանից հետո): «Թավրիզ-Էրզրում» գազամուղի պայթյունի հետ կապված՝ Ադրբեջանն ստիպված է եղել մեծացնել Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով Թուրքիա առաքվող գազի մատակարարման ծավալը:

Օգոստոսի 10-ի գիշերը Շըրնաքի մարզի Մաղարա գյուղի մոտ՝ իրաքյան սահմանից 62 մղոն (մոտ 100 կիլոմետր) հեռավորության վրա, պայթեցվեց «Քիրքուք-Յունուրթալըք» (Ջեյհան) նավթամուղը, ինչի արդյունքում գոհվեց 2 մարդ եւ վիրավորվեց մեկը: Պայթուցիկ սարքը գործել է հեռակառավարմամբ, ինչի պատճառով էլ պայթյունից անմիջապես հետո օդ բարձրացված «F-16» ինքնաթիռներին չի հաջողվել հայտնաբերել պայթյունն իրականացնողներին: Թուրքական կողմն անմիջապես դրանում մեղադրեց քուրդ զինյալներին: Նավթամուղի վնասված հատվածի վերանորոգման համար պահանջվեց 2 օր: Բնականաբար, դադարեցվեց իրաքյան նավթի առաքումը դեպի Ջեյհան: Հարկ է նշել, որ սա 2010 թվականին գրանցված առաջին պայթյունը չէր տվյալ նավթամուղի համար: Հուլիսի 3-ին պայթեցվել էր նավթամուղի Մարդինի նահանգի Սիդյաթ քաղաքի մոտով անցնող հատվածը (Սիրիայի սահմանի մոտ): Իսկ ապրիլի 26-ին Մոսուլի մերձակայքում (Նինեվեի նահանգ) պայթեցվել էր նավթամուղի իրաքյան հատվածը եւ 3 օրով կասեցվել իրաքյան նավթի մուտքը Թուրքիա:

Բնականաբար, այս ամենը Թուրքիային լուրջ տնտեսական կորուստների առաջ կանգնեցրեց՝ միաժամանակ սասանելով հուսալի տարանցիկ երկիր լինելու նրա վարկը: Այն նաեւ հարցականի տակ է դնում քրդաբնակ շրջաններով անցնելիք հնարավոր նոր խողովակաշարերի կառուցման արդյունավետությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հուլիսի 23-ին Թուրքիայի ու Իրանի միջեւ կնքված 1 միլիարդ դոլար արժողությամբ եւ 660 կիլոմետրանոց Թուրքիա-Իրան նոր գազատարին, որը կառուցվելու է առաջիկա 3 տարիների ընթացքում եւ որով հնարավոր կլինի տարեկան դեպի Թուրքիա եւ Եվրոպա առաքել 50-60 միլիարդ խորանարդ մետր գազ: Դրա համար էլ Թուրքիայում վճռվել է այսուհետ խողովակաշարերի պաշտպանությունը դնել իսրայելական արտադրության «Heron» անօդաչու հետախուզական ինքնաթիռների վրա:

Այս ամենին զուգահեռ՝ Թուրքիայում շարունակվում է մարտի 10-ին ձերբակալված PKK 23 հաքերների հետաքննությունը, որոնք իրենց անվանում են «վիրտուալ պարտիզան»: Քրդական հաքերային «Սառը հարձակման խմբի» անդամները բաժանվել են 4 մասի եւ հիմնականում ցուցումներ ստացել Հյուսիսային Իրաքում գտնվող PKK ճամբարից: Դիարբեքիի հատուկ լիազորություններով օժտված համրապետական

դատախազն այս կապակցությամբ պատրաստել է 324 էջանոց զեկույց, որում նշված է, որ նրանք կոտրել են պետական պաշտոնյաների, զինվորականների օգտագործման համար «Facebook»-ի 3800 էջ, մոտ 2000 ոստիկանի, զինվորականի, քաղաքական գործչի պատկանող էլեկտրոնային փոստեր, ինչպես նաև հազարավոր հասարակական կայքէջեր: Ընդդիմադիր Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) կայքը նույնպես չի խուսափել դրանից:

Բացի այդ, քուրդ հաքերները լրջորեն պատրաստվել են վայր զցել Թուրքիայի զինված ուժերում առկա «Heron» անօդաչու հետախուզական ինքնաթիռները, որոնց հետ քուրդ զինյալները մեծ դժվարությունների են հանդիպում: Վերջիններս գտնում են, որ այդպիսի 1 ինքնաթիռ ցած զցելն ավելի կարելու է, քան 100 թուրք զինվոր սպանելը: Քուրդ հաքերները հատուկ համակարգչային ծրագրերով փորձել են Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Բաթմանի տեղական հեռուստատեսության արբանյակային հաղորդիչի միջոցով միանալ անօդաչու ինքնաթիռների հաճախականությանը եւ վայր զցել դրանք, սակայն դա նրանց չի հաջողվել: Քուրդ հաքերներն օգտվել են «Heron» անօդաչու հետախուզական ինքնաթիռները վայր զցելու ռուս եւ աֆղան հաքերների պատրաստած հատուկ ծրագրերից:

Արդեն ավարտվել է 12 հաքերի հարցաքննությունը. նրանք մեղադրվում են «զինված ահաբեկչական կազմակերպության անունից հանցանք գործելու», «ահաբեկչական կազմակերպության օգտին քարոզչություն անելու» եւ «տեղեկատվական համակարգում տվյալներ վերացնելու, կայքէջեր արգելափակելու» հողվածներով: Նրանց սպառնում է 40-ամյա բանտարկություն:

Օգոստոսի 25-ին Թուրքիայի ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայը հայտնեց, որ 1990–2009 թվականներին թուրքական զինված ուժերի եւ ոստիկանության կողմից վնասագերծվել է 27.905 ՔԿԿ-ական: Սպանվել է 19.946 քուրդ զինյալ, որից, ի դեպ, 792-ը` կին: Աթալայի հաղորդմամբ` վնասագերծված քուրդ զինյալներից 1901-ը եղել է մինչեւ 20 տարեկան, 5025-ը` 20-30, 1440-ը` 31-40 տարեկան, 496-ը` 40-ից բարձր:

Ներկայումս եվրոպական (մասնավորապես` գերմանական) մամուլում շրջանառության մեջ է մտել այն լուրը, որ թուրքական զինուժը ՔԿԿ զինյալների դեմ պայքարում քիմիական զենք է օգտագործում եւ մասնատում նրանց դիակները: Այսպես, գերմանական «Der Spiegel» թերթը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ իրենց խմբագրությունում ստացվել են զոհված 8 քուրդ զինյալների լուսանկարներ. դրանք հանձնվեցին Չամբուրգի համալսարանի քրեական լաբորատոր-

րիա՝ պարզելու լուսանկարներում առկա անձանց մահվան պատճառը: Գերմանացի մասնագետները եկան այն նախնական եզրակացության, որ քուրդ զինյալները զոհվել են քիմիական զենքի կիրառման արդյունքում: Գերմանական Բունդեսթագի զինաթափման գծով հանձնաժողովի նախագահ Ուտա Ցապֆը հայտարարեց, որ եթե դա ապացուցվի, ապա Թուրքիային սպառնում է միջազգային պայմանագրերին համապատասխան պատժամիջոցների կիրառումը:

Միաժամանակ, Ամերիկա-հրեական կոմիտեն (AEK) վարչապետ Էրդողանին կոչ է արել հետաքննել թուրքական բանակի կողմից քրդերի դեմ քիմիական զենքի կիրառման մասին տեղեկատվությունը: AEK-ի գործադիր տնօրեն Դեհիդ Յարիսը նշել է. «Թուրքիան պարտավոր է աշխարհին բացատրել այդ լուսանկարներում պատկերված դիակները, որոնց վնասվածքները համատեղելի են քիմիական զենքի կիրառման հետ»:

Սակայն Թուրքիայի արտգործնախարարության ներկայացուցիչը հայտարարեց, որ «դա PKK-ի մաքուր պրոպագանդան է, որի նպատակը Թուրքիան հեղինակազրկելն է»: Նա հավելել է, որ Թուրքիան ակտիվ աշխատանքներ է տանում քիմիական զենքի մշակումն ու կիրառումն արգելելու ուղղությամբ, եւ որ ոչ վաղ անցյալում թուրք դիվանագետ Ահմեթ Ուզյունջյուն ընտրվել է Քիմիական զենքն արգելող կազմակերպության (OPCW) գլխավոր տնօրեն: Չնայած այս հայտարարությանը՝ բեռլինյան «Die Tageszeitung» օրաթերթն ստացել է սպանված 6 քրդերի դիակների նոր ապշեցուցիչ լուսանկարներ: Ի դեպ, մատնանշվում է, որ հունիսին էլ Իրանն է քիմիական զենք կիրառել «Քուրդիստանի ազատ կյանք» կուսակցության (PJAK) զինյալների դեմ, որը PKK-ի իրական կան թեւն է:

Օգոստոսի 13-ին հայտնի դարձավ, որ PKK-ն մինչեւ սեպտեմբերի 20-ը ժամանակավոր զինադադարի որոշում է ընդունել: Չնայած այդ ընթացքում PKK-ն որեւէ ռազմական գործողություն չի ձեռնարկելու՝ նա հայտարարել է, որ եթե թուրքական զինուժը հարձակումներ գործի իր վրա, ապա անպայման պատասխան հարված կստանա: Ժամանակավոր զինադադարի որոշումը պայմանավորված է մահմեդականների համար սրբազան ամիս համարվող ռամադանով եւ քրդական «ժողովրդավարական հասարակության կոնգրեսի» ու «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության կոչերով: Չնայած զինադադարին՝ որոշակի բախումներ ու մարդկային զոհեր շարունակում են գրանցվել:

Ժամանակավոր զինադադարը շարունակական դարձնելու համար PKK-ն առաջ է քաշում 4 նախապայման. ա) ազատ արձակել PKK-ի քաղաքական կառույց հանդիսացող «Քուրդիստանի հասարակությունների միության» ձեռբակալված անդամներին, բ) քրդական հարցի

կարգավորման շուրջ բանակցություններ սկսել Իմրալը կղզում ցմահ բանտարկված Աբդուլահ Օջալանի հետ, գ) նվազեցնել խորհրդարանական ընտրություններում գործող 10 տոկոսանոց նախընտրական արգելքը, դ) դադարեցնել PKK-ի դեմ ռազմական գործողությունները:

Ողջ ամառվա ընթացքում Թուրքիայում շարունակվող արյունալի իրադարձություններն ստիպեցին երկրի ղեկավարությանը գնալ լուրջ քայլերի: Դրանցից գլխավորը վերաբերում է արհեստավարժ բանակի ստեղծմանը, ինչը Թուրքիայում սկսել էր արժարժվել վերջին 2-3 տարում: Այս խնդիրը Թուրքիայում վերստին ի հայտ եկավ 2010 թվականի զարմանը եւ լայն թափ հավաքեց հուլիսի առաջին շաբաթվանից՝ կապված PKK-ի ծավալած ակտիվ գործունեության հետ: Ապրիլի 23-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի եւ Գլխավոր շտաբի (ԳՇ) նախկին պետ Իլքեր Բաշբուրդի միջեւ կայացած հանդիպման ժամանակ խոսք է գնացել նաեւ արհեստավարժ բանակի ստեղծման մասին: Չայտարարվեց, որ մինչեւ հուլիս թուրքական ցամաքային զորքերի 5 եւ ժանդարմերիայի 1 բրիգադ (նվազագույնը 30.000 մարդ) պետք է ամբողջովին կոմպլեկտավորվի պայմանագրային զինծառայողներով: Չնայած դրան՝ ԳՇ-ում կարծում են, որ անհնար կլինի արհեստավարժ բանակին ամբողջովին անցում կատարելը, քանի որ դա Թուրքիայի բյուջեին կարող է արժենալ 45 միլիարդ ամերիկյան դոլար, ինչն այդ երկրի ուժերից վեր է:

Յունիսի 21-ին կայացած Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում վճռվեց հակահարեկչական միջոցառումներում այսուհետ ընդգրկել բացառապես պայմանագրային զինծառայողներին, որոնց թիվը վերջին տարիներին Թուրքիայում կտրուկ աճել է: Այդ որոշումը պայմանավորված էր ժամկետային զինծառայողների կրած մեծ կորուստներով, ինչը հանգեցնում է նրան, որ թուրք զինծառայողների ծնողները չեն ցանկանում իրենց զավակներին ուղարկել PKK-ի դեմ պատերազմին, զորքերում մեծանում է դասալքությունը:

Յուլիսի կեսերին Թուրքիայի պաշտպանության նախարար Մեհմեթ Վեջդի Գյոնյուլը հայտնեց, որ աշխատանքներ են տարվում 150 սահմանային անցակետերի եւ հատուկ նախապատրաստություն անցած բանակային ստորաբաժանումների ավելացման խնդրի շուրջ: Վերջիններս կպահպանեն սահմանի առավել վտանգավոր հատվածները: Արհեստավարժ բանակը, որն այլ կերպ անվանում են նաեւ հատուկ բանակ, ժանդարմերիայի եւ հատուկ նշանակության զորքերի հետ մեկտեղ, կազմելու է ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարի առանցքը: Նրան աջակցելու են նաեւ ներքին անվտանգության ջոկատները: Արհեստավարժ բանակին անցում կատարելը ենթադրում է որոշակի

օրենսդիր փոփոխություններ: Կանխատեսվում է, որ դրանք կկատարվեն հոկտեմբեր ամսին:

Արհեստավարժ բանակին անցում կատարելուն, տարբեր պատճառներով եւ հիմնավորումներով, դեմ է արտահայտվում Թուրքիայի զինվորական վերնախավի մի զգալի մասը, մասնավորապես՝ ԳՇ նախկին պետ Իլքեր Բաշբուլը, ԳՇ պետի պաշտոնում օգոստոսի վերջին նրան փոխարինած ցամաքային զորքերի նախկին հրամանատար, բանակի գեներալ Սեբահաթթին Ըշըք Քոշաները:

Թուրքական կառավարությունը մտադիր է նաեւ ուժեղացնել հետախուզական գործողություններն այն շրջաններում, ուր սովորաբար ներթափանցում է PKK-ն: ԱՄՆ վերոնշյալ նիստից քիչ անց տեղի ունեցավ նախագահ Գյուլի, վարչապետ Էրդողանի եւ Ազգային հետախուզական ծառայության (MIT) նորանշանակ ղեկավար Յաքան Ֆիդանի հանդիպումը, ուր քննարկվել են թուրքական հետախուզության հնարավոր թույլ տեղերը եւ վճռվել է ուժեղացնել MIT-ի տեխնիկական միջոցներն ու ակտիվացնել հետախուզական աշխատանքներն այն շրջաններում, ուր PKK-ն ակտիվ գործունեություն է ծավալում: Բացի այդ, Էրդողանը հայտնեց, որ ԱՄՆ-ի ու Իրաքյան Քրդստանի հետ բանակցություններ է վարել տարածաշրջանում թուրքական հետախուզության ակտիվացման շուրջ: Ենթադրվում է, որ այդ նպատակներին հասնելու համար Թուրքիան ներգրավելու է մոտ 2000 գործակալի: Միեւնույն ժամանակ, թուրքական կառավարությունը ցանկանում է նվազեցնել իր կախվածությունն այլ երկրների (մասնավորապես ԱՄՆ-ի) կողմից տրամադրվող հետախուզական տեղեկատվությունից: Յանդիպումից քիչ անց MIT-ի 16-րդ ղեկավար Ֆիդանն անձամբ այցելել է երկրի հարավարեւելյան նահանգների հետախուզական կենտրոնները եւ ներկայացրել PKK-ի դեմ պայքարի նոր մոտեցումները:

Փաստորեն, ներկայումս Թուրքիայում խոսք չի գնում պարտադիր զինվորական ծառայությունը վերացնելու եւ ամբողջովին արհեստավարժ բանակին անցում կատարելու մասին: Խոսքը միայն արհեստավարժ զինծառայողների թվաքանակի ավելացման մասին է: Դրանով երկրում մարտական առաջադրանքների գոտիները կբաժանվեն պարտադիր զինծառայություն անցնողների (ժամկետային զինծառայող) եւ արհեստավարժ զինծառայողների միջեւ:

Արհեստավարժ բանակի ստեղծման հանդեպ թուրքական զինվորական վերնախավի բացասական մոտեցումն անսպասելի չէր. նախ այդ խնդիրը Թուրքիայում ի հայտ եկավ զինվորական վերնախավի հակառակորդ համարվող ԱԶԿ կառավարման ժամանակ: Այսինքն՝ ենթադրվում է, որ նրանում առավել մեծ կլինի ԱԶԿ-ի ազդեցությունը: Արհեստավարժ

բանակի ստեղծման շուրջ թուրքական «Taraf» թերթի մեկնաբանությունը խոսում է շատ բանի մասին. «Արհեստավարժ բանակն ընդդեմ բանակի»: Չպետք է մոռանալ, որ «Taraf» թերթը դասվում է իշխող կուսակցության համակիրների թվին:

Մյուս կողմից էլ, ԱԶԿ-ն ցանկանում է արհեստավարժ բանակի ստեղծմամբ երկրում չեզոքացնել PKK-ի ակտիվությունը: Պետք է նշել, որ արհեստավարժ բանակն ի վիճակի կլինի առավել հաջող պայքարելու PKK-ի դեմ եւ առավել արդյունավետ հսկելու թուրք-իրաքյան սահմանը:

Եթե ԱԶԿ-ն ներկայումս որոշակի գիջումների գնա քրդական կողմին (PKK-ին), ապա դա իսկույն կհանգեցնի նրա վարկանիշի անկմանը եւ գլխավոր ընդդիմադիր ուժերի՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) եւ ԱՇԿ-ի վարկանիշի բարձրացմանը: Հետեւաբար, ԱԶԿ-ն պետք է խիստ մոտեցում ցուցաբերի քրդերի հանդեպ: Սակայն դա էլ ունի իր բացասական երանգները. դեպքերի զարգացման նմանատիպ սցենարի դեպքում ԱԶԿ-ի վարկանիշն էլ ավելի կընկնի երկրի քրդաբնակ շրջաններում: Իսկ «քրդական» քվեները ԱԶԿ-ին բավականին պետք կզան խորհրդարանական (եւ ոչ միայն) ընտրությունների ժամանակ: Դրանք զգալիորեն նպաստել են 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակին: Հատկանշական է, որ այդ ժամանակ քրդաբնակ այն շրջաններում, ուր անկախ քուրդ թեկնածուները պարտություն էին կրել կամ էլ ընդհանրապես իրենց թեկնածությունը չէին առաջադրել, ԱԶԿ-ն վճռական հաղթանակ էր տարել՝ հավաքելով քվեների 60 տոկոսից ավելին:

ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արտաշես Տեր-Հարությունյան

Անցած երկու-երեք ամիսներին երեւան եկան նոր ցուցիչներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ թուրք-իսրայելական հարաբերություններում առաջացած հակասությունները public policy-ի մակարդակից աստիճանաբար թեւակոխում են ավելի խորքային ոլորտ:

Դիտարկում

Մայիսի վերջին Թուրքիայում նշանակվեց Ազգային հետախուզական կառույցի (MIT) նոր տնօրեն՝ Հաքան Ֆիդանը¹: Վերջինիս նշանակումը բացասական արձագանք առաջացրեց Թել Ավիվում, եւ պատճառները, իսրայելական կողմի կարծիքով, բավարար էին:

Թել Ավիվի համոզմամբ, թուրքական կողմից հենց Ֆիդանն էր մայիսին Թեհրանում Թուրքիայի, Բրազիլիայի ու Իրանի միջեւ կնքված հայտնի համաձայնության հեղինակը, որը պետք է կանխեր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների սահմանումը², եւ ըստ որի՝ իրանական կողմը ցածր հարստացված ուրանը պետք է ուղարկեր արտերկիր, իսկ այնտեղից ստանար բարձր հարստացված ուրան՝ բժշկական նպատակներով օգտագործելու համար: Իսրայելական կողմը հիշեց նաեւ, որ մինչեւ MIT-ի նոր տնօրեն դառնալը, Ֆիդանն, աշխատելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունում, աչքի էր ընկել իրանամետ դիրքորոշումներով:

Իսրայելական կողմի անհանգստությունները՝ կապված MIT-ի տնօրենի պաշտոնին Ֆիդանի նշանակման հետ, ամռան ընթացքում, ըստ էության, ոչ միայն չփարատվեցին, այլեւ նոր պատճառներ գտան: Հուլիսի 25-ին Երուսաղեմի մոտ գտնվող կիբուցներից մեկում Իսրայելի պաշտպանության նախարար եւ այդ երկրի Աշխատավորական կուսակցության նախագահ Էհուդ Բարաքը, հանդիպելով իր կուսակցության ակտիվի հետ, հայտարարեց, թե MIT-ի տնօրենի պաշտոնին «Իրանի բարեկամի» նշանակումը կարող է առաջիկա ամիսներին Թեհրանի համար մատչելի դարձնել հետախուզական այն գաղտնիքները, որոնք ժամանակին Թել Ավիվը փոխանցել է թուրքական կողմին: Ուշագրավ է,

որ Անկարայի բողոքից հետո Բարաքը վերահաստատեց իր խոսքերը՝ մեկ անգամ եւս ընդգծելով Թեյ Ավիվի մտահոգությունները՝ կապված Չաքան Ֆիդանի նշանակման հետ:

Հատկանշական է, որ Իսրայելի պաշտպանության նախարարի այդ հայտարարությունից մոտ երկու շաբաթ անց՝ օգոստոսի 11-ին, իտալական *Corriere Della Sera*-ն գրեց, թե Չաքան Ֆիդանի ու Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության պետ Յոսեյն Թայբի միջեւ կայացած հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Թուրքիան զենք կմատակարարի Սիրիա ու Լիբանան, իսկ իրանական կողմը հոգ կտանի, որ այդ զենքը հայտնվի «Հիզբալլահ» շարժման ձեռքում: Թուրքիայի արտգործնախարարությունը հիմնազուրկ որակեց այդ հրապարակումը:

Ամռան ընթացքում թուրք-իսրայելական հարաբերություններին վերաբերող հաջորդ ուշագրավ զարգացումը Իսրայելի ու Յունաստանի միջեւ թափ հավաքող համագործակցությունն է:

Այստեղ հարկ է նշել, որ հարաբերություններն Աթենքի ու Թեյ Ավիվի միջեւ սովորաբար աչքի են ընկել ընդգծված սառնությամբ՝ կապված ժամանակին թուրք-իսրայելական ջերմ հարաբերությունների հետ, որին ի պատասխան՝ Յունաստանը զարգացրել է հարաբերություններն արաբական երկրների հետ³: Իր դերն է խաղացել նաեւ Յունաստանի կախվածությունն արաբական էներգակիրներից:

Այս ամռան ընթացքում, սակայն, իսրայելա-հունական հարաբերությունները կտրուկ սկսեցին ակտիվանալ: Դեռեւս հունիսի սկզբին իսրայելական աղբյուրները գրեցին, թե Mavi Marmara-ի դեպքից հետո Յունաստանի վարչապետ Ջորջ Պապանդրեուն ուղիներ է որոնում իսրայելցի իր գործընկերոջ հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Նշվում էր, որ Յունաստանը ցանկանում է Իսրայելի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացման միջոցով որոշակիորեն նվազեցնել Թուրքիայի ազդեցությունն Էգեյան ծովում եւ Միջերկրականի արեւելյան մասում եւ, բացի այդ՝ ստանալ հրեական միջազգային ֆինանսական կառույցների աջակցությունը՝ ծանր տնտեսական վիճակից դուրս գալու համար: Փոխարենը, իսրայելական կողմի պատկերացմամբ՝ Անկարան պետք է մտահոգվի իր ավանդական հակառակորդի ու տեխնոլոգիական լուրջ հնարավորություններ ունեցող Իսրայելի միջեւ ռազմաքաղաքական համագործակցության խորացմամբ⁴:

Հայտնի չէ, թե ի վերջո ինչ պայմանավորվեցին Աթենքն ու Թեյ Ավիվը, սակայն այս հուլիսի 23-ին՝ 18 տարվա մեջ առաջին անգամ, տեղի ունեցավ Յունաստանի վարչապետի այցը Իսրայել, իսկ դրանից կարճ

ժամանակ անց՝ օգոստոսի 16-ին, Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն մեկնեց Աթենք:

Եվ վերջապես, ամռան ընթացքում թուրք-իսրայելական հարաբերությունները բնորոշող երրորդ ուշագրավ հանգամանքը, որի վրա արժե ուշադրություն դարձնել, ամերիկա-թուրքական ռազմական համագործակցությանն առնչվող զարգացումներն էին, որոնք ուղղակիորեն առնչվում էին թուրք-իսրայելական հարաբերությունների հետ:

Օգոստոսի 15-ին հեղինակավոր The Financial Times-ը գրեց, թե ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման անձամբ է նախագուշացրել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիբ Էրդողանին, որ եթե չփոխվեն Անկարայի մոտեցումներն Իսրայելի ու Իրանի հարցում, ապա Թուրքիան չի կարող նոր զինատեսակներ գնել Միացյալ Նահանգներից: Իսկ ավելի ուշ՝ օգոստոսի վերջին, հայտնի դարձավ, որ Միացյալ Նահանգները հրաժարվել է մասնակցել այս հոկտեմբերին Թուրքիայում կայանալիք «Anatolian Eagle» («Անատոլյան արծիվ») անվամբ զորավարությունների: Պատճառն այն է, որ թուրքական կողմը չի հրավիրել Իսրայելին՝ ամեն տարի անցկացվող օդուժի այդ զորավարություններին մասնակցելու համար:

Գնահատական

Ի համեմատ նախորդ տարվա, երբ թուրք-իսրայելական հարաբերությունները գտնվում էին բավական լարված վիճակում, այս տարի երկու երկրների հակասությունները ստացել են ավելի խոր բնույթ: Իսրայելի հրապարակային մտահոգությունները՝ կապված Թուրքիայի հետախուզության նոր պետի հետ եւ նման արագությամբ քայլերը՝ մերձենալու Հունաստանին, վերաբերում են այն ոլորտներին, որոնք միշտ էլ էական են եղել թուրք-իսրայելական հարաբերությունների համար: Հետեւաբար՝ այսօրինակ զարգացումները նշված ոլորտներում առաջին հերթին պետք է վկայեն թուրք-իսրայելական խորացող հակասությունների մասին:

¹ Ի դեպ, Ֆիդանը, որը համարվում է Կենտրոնական Ասիայի ու Մերձավոր Արեւելքի գծով մասնագետ, իր դոկտորական թեզը նվիրել է ամերիկյան, բրիտանական ու թուրքական հետախուզությունների համեմատական վերլուծությանը: Թեզի հիմնական դրույթներից մեկն էլ այն է, որ MIT-ը, մասնատվելով երկու մասի՝ ներքին ու արտաքին հետախուզություններով զբաղվող

կառույցների, պետք է ընդլայնի իր գործունեությունն արտերկրում: Ֆիդանի (նա MIT-ի փոխտնօրեն եղած ժամանակ եղել է նաև Թուրքիայի վարչապետ Էրդողանի խորհրդականն արտաքին քաղաքականության գծով եւ համարվում է նրա վստահելի մարդկանցից մեկը) նշանակումն անվտանգության ոլորտի արեւմտյան որոշ փորձագետներ զնահատեցին որպես իր արտաքին հետախուզական հնարավորություններն ընդլայնելու Անկարայի անթաքույց ձգտում:

2 Այդ համաձայնությունն իր դերը չունեցավ: Հայտնի է, որ հունիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նոր պատժամիջոցներ կիրառեց Թեհրանի նկատմամբ, թեւ Անկարան դեմ քվեարկեց նոր պատժամիջոցներին:

3 Օրինակ, 20-րդ դարի երկրորդ կեսին Պաղեստինի ազատագրության կազմակերպության բազմաթիվ ակտիվիստներ շատ հաճախ ապաստան էին գտնում հենց Հունաստանում:

4 Իսրայելական աղբյուրները հիշեցնում էին, որ, օրինակ, ռազմաքաղաքական ոլորտում Հունաստանն ու Իսրայելն արդեն ունեցել են համագործակցության մեկ ուշագրավ փորձ: 2008թ. ամռանը Աթենքը թույլատրել էր իսրայելական օդուժի F-15 ու F-16 մոտ 100 ինքնաթիռների զորավարժություններ անցկացնել Հունաստանի օդային տարածքում: Այդ զորավարժությունների կարեւորությունն այն էր, որ Իսրայելից Հունաստան հեռավորությունը՝ մոտ 1900կմ, գրեթե համընկնում է Իսրայելից Իրան հեռավորության հետ, եւ բացի այդ՝ հայտնի է, որ 2000-ից հունական զինուժի տրամադրության տակ էին հակաօդային պաշտպանության ռուսական C-300 համալիրները, որոնց մատակարարումն Իրանին այն ժամանակ հնարավոր էր համարվում, եւ որոնք այդ զորավարժությունների արդյունքում ավելի «հասկանալի» դարձան իսրայելական օդուժին:

ԿՈՍՈՎՈՅԻ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սուրեն Սարյան

Ինչպես հայտնի է, 2008թ. փետրվարի 17-ին Կոսովոյի ալբանական իշխանությունները հռչակեցին երկրամասի անկախությունը, որն անմիջապես ճանաչվեց ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ աշխարհի այլ առաջատար երկրների կողմից: Ներկայիս վիճակով Կոսովոն ճանաչել են ՄԱԿ-ի 64 անդամ պետություններ, սակայն ՄԱԿ-ի անդամ դառնալու համար Կոսովոն պետք է ճանաչված լինի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի անդամների 2/3-ի, այսինքն՝ 100-ից ավելի երկրների կողմից:

Կոսովոյի անկախությունը ԵՄ-ի 27 երկրներից չեն ճանաչել միայն հինգը՝ Ղրղիզստանը, Կիպրոսը, Սլովակիան, Ռումինիան եւ Իսպանիան, այսինքն՝ բոլոր այն պետությունները, որոնք ունեն ազգային փոքրամասնությունների հետ կապված համանման խնդիրներ:

2009թ. դեկտեմբերին Սերբիան դիմեց ՄԱԿ-ի Միջազգային դատարան՝ Կոսովոյի անկախության հռչակման իրավական համապատասխանության հարցը քննելու հայցով: 2010թ. հուլիսի 22-ին Միջազգային դատարանը որոշում կայացրեց, որ Կոսովոյի անկախության հռչակագիրը չի հակասում միջազգային իրավունքի նորմերին:

Ըստ էության, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումը միայն ամրագրեց Բալկաններում առկա ստատուս քվոն: Սերբիան շարունակեց պնդել, որ Կոսովոն մնում է իր տարածքի անքակտելի մասը, ՄԱԿ ԱԽ մշտական անդամներ Ռուսաստանը եւ Չինաստանը համերաշխություն հայտնեցին Սերբիային, իսկ ԵՄ-ը եւ ԱՄՆ-ը ողջունեցին դատարանի վճիռը:

Մնում է անորոշ, թե ինչպես կարող է Կոսովոյի նախադեպն ազդել նմանատիպ այլ հակամարտությունների եւ անջատողական շարժումների վրա: Թե՛ Կոսովոյի անկախության հռչակման ակտը, թե՛ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի վճիռը ոչ թե իրավական, այլ քաղաքական նպատակահարմարությունից բխող որոշումներ էին: ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը պնդում են, որ Կոսովոյի նախադեպը կիրառելի չէ անջատողական այլ շարժումների, մասնավորապես՝ Աբխազիայի ու Չվ.Օսիայի դեպքում, իսկ Ռուսաստանը, ճանաչելով վերջին երկու ինքնավարությունները, չի ընդունում Կոսովոյի անկախությունը:

Կոսովոյի նախադեպը գալիս է ապացուցելու, որ միջազգային

հանրությունը կարող է անկախություն տրամադրել՝ առանց այն երկրի համաձայնության, որից անջատվում է տվյալ տարածքը: Սակայն միաժամանակ պարզվեց (ինչպես նախորդ՝ Յուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության, այնպես էլ հաջորդ՝ Աբխազիայի եւ Չվ.Օսիայի ճանաչման դեպքում), որ առանց նախկին մետրոպոլիայի եւ ամբողջ միջազգային համայնքի կողմից ճանաչման՝ անկախ պետականությունը մնում է պայմանական: Քանի դեռ ձեռք չի բերվել համաձայնություն Բելգրադի եւ Պրիշտինայի միջեւ, Կոսովոյի հարցը վերջնական լուծում չի գտնի: Իսկ Սերբիան չունի իրական ռեսուրսներ այն հետ վերադարձնելու համար:

Տասը տարի շարունակաբար կոսովցիները ստեղծում էին իրենց կառավարման մարմինները: Այնտեղ պայքար էր մղվում չափավորականների՝ Կոսովոյի ժողովրդավարական լիգայի (ԿժԼ) եւ Կոսովոյի ազատագրման բանակից (ԿԱԲ) դուրս եկած քաղաքական ղեկավարների՝ Կոսովոյի ժողովրդավարական կուսակցության (ԿժԿ) միջեւ: ԿժԼ առաջնորդ, Կոսովոյի առաջին նախագահ Իբրահիմ Ռուգովայի 2006թ. մահվանից հետո իշխանությունը կենտրոնացավ ԿժԿ-ի ձեռքում, որի ղեկավար, պատերազմի տարիներին ԿԱԲ-ի առաջնորդ Յաջիմ Թաչին դարձավ վարչապետ: Յենց Յ.Թաչիի ղեկավարած կառավարությունը 2008թ. փետրվարին հռչակեց Կոսովոյի անկախությունը: Ներկայումս Կոսովոն ղեկավարում է ԿժԼ–ԿժԿ կոալիցիան, որը բաժանել է նախագահի ու վարչապետի պաշտոնները:

Ականատեսները նշում են, որ, լինելով ամբողջությամբ արտաքին կառավարումից կախված միավոր, Կոսովոն դժվարությամբ է լուծում պատերազմականից խաղաղ զարգացման վիճակին անցնելու խնդիրները: Այստեղ առկա են զանգվածային գործազրկություն, համատարած քրեականացում: Կոսովոյի տնտեսության հիմնական եկամտի աղբյուրն է թմրանյութի եւ զենքի վաճառքը: Կոսովոյի բնակչության 40%-ը գտնվում է աղքատության շեմից ներքեւ, ենթակառուցվածքները գրեթե չեն գործում, առկա է կոսովցիների մեծ արտագաղթ դեպի Արեւմտյան Եվրոպայի երկրներ: Ըստ էության, Կոսովոն չկայացած պետություն է:

Պարբերաբար տեղի են ունենում նաեւ բախումներ սերբերի եւ ալբանացիների միջեւ: Վերջին տասը տարիների ընթացքում Կոսովոն լքել է մոտ 200.000 սերբ: Դեռեւս շուրջ 60 հազ. սերբ ապրում է սերբական անկլավներում, Կոսովոյի հյուսիսային մասում՝ Կոսովակա-Միտրովիցա կենտրոնով: Ընդ որում, սերբական անկլավը Կոսովակա-Միտրովիցայում չի ենթարկվում Պրիշտինայի կառավարությանը եւ համագործակցում է միայն ՄԱԿ-ի առաքելության հետ:

Բացի ՄԱԿ ու ԵՄ ուժերից, Կոսովոյում են գտնվում Եվրամիության քաղաքացիական առաքելության ներկայացուցիչները, ներառյալ՝ ոստիկաններ, դատավորներ, իրավաբաններ, մաքսային ծառայողներ, անգամ բանտապահներ: Ընդ որում, այս առաքելության ներկայացուցիչներն իրավասու են ոչ միայն խորհուրդներ տալ նորաստեղծ պետության պետական մարմիններին, այլև շրջանցելով նրանց՝ որոշումներ կայացնել: Նման իրավիճակը փաստորեն Կոսովոն դարձրել է ԵՄ-ի պրոտեկտորատ:

Պետք է ընդունել, որ ալբանական ազգային նախագիծը XXI դարի առավել հաջողված նախագծերից է: Ալբանացիները կարողացան համադրել իրենց շահերն Արեւմուտքի ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի շահերի հետ, ինչի շնորհիվ նրանք վերահսկողություն են սահմանել Կոսովոյի երկրամասի նկատմամբ եւ ձեռք բերել ինքնավարության բարձր աստիճան Սակեդոնիայում: Ինչպես նշում են փորձագետները, եթե ալբանացիները համարվում են «վեր հառնող» տարածաշրջանային գործոն, ապա սերբերի ազգային ներուժն անկում է ապրում: Վերջին տասնհինգ տարիների ընթացքում նրանք մի շարք պատմական պարտություններ կրեցին՝ ձախողվելով բոլոր տարածքային վեճերում:

Խոսելով ԱՄՆ ու ԵՄ շահերի մասին, հարկ է նաեւ նշել, որ մինչ օրս Բոսնիայի եւ Հերցեգովինայի Հանրապետության (ԲՀՀ) կառավարումն իրականացվում է ԵՄ Բարձր հանձնակատարի գրասենյակի միջոցով, իսկ ԵՄ-ի զորամիավորումները կատարում են խաղաղապահ առաքելություն: ՆԱՏՕ-ն եւ ԵՄ-ն ակտիվորեն դիմադրում են ԲՀՀ կազմից 1,5 միլիոնանոց Սերբական Հանրապետության անջատմանը. այս դեպքում Կոսովոն նախադեպ չէ:

Փաստացիորեն, Բալկանների կայունության ապահովման պատասխանատվությունն այսօր ստանձնել է ԵՄ-ը:

Դեռեւս 1999թ. հունիսի 10-ին ԵՄ-ի կողմից ընդունվեց «Հարավարեւելյան Եվրոպայի կայունության պակտը», որտեղ ամրագրվում էր այդ տարածաշրջանի երկրների եվրաստլանտյան ինտեգրման սկզբունքը:

2010թ. հունիսին Սարաեւոյում կայացավ Արեւմտյան Բալկանների ապագայի հարցով միջազգային համաժողով: Օրակարգում տարածաշրջանի երկրների՝ Սերբիայի, Խորվաթիայի, Մակեդոնիայի, Մոնթենեգրոյի, Բոսնիա-Հերցեգովինայի եւ Ալբանիայի եվրոպական ինտեգրման հարցերն էին: ԵՄ-ի կողմից տրվեցին հավաստիացումներ՝ նշված երկրների միությանն անդամակցելու դրական հեռանկարի առումով: Վերահաստատվեց նաեւ այն տեսակետը, որ տարածաշրջանի կայունությունը կապված է նրա եվրաստլանտյան ինտեգրման ընթացքի հետ:

Սակայն Կոսովոն այդ ցանկում դեռ չի հիշատակվում: Մյուս կողմից, փաստորեն, Սերբիայի առջեւ դրվեց պայման՝ կարգավորել հարաբերությունները Կոսովոյի հետ եւ ընդունել դրա անկախ գոյությունը, ինչից հետո միայն հնարավոր կլինի խոսել ԵՄ-ին Սերբիայի անդամակցության մասին:

Սեպտեմբերի 10-ին ՄԱԿ Գլխավոր վեհաժողովն ընդունեց բանաձեւ Կոսովոյի հարցի վերաբերյալ: Բանաձեւում կոչ է արվում Բելգրադի ու Պրիշտինայի իշխանություններին սկսել բանակցություններ՝ ԵՄ միջնորդությամբ: Այստեղ չկա որեւէ ակնարկ Կոսովոյի անկախության միակողմանի հռչակման իրավասության վերաբերյալ: Բացի այդ, ի գիտություն է ընդունվել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի վճիռը, ինչը որակվում է իբրեւ միջազգային իրավական նորմերին համապատասխանող:

Փորձագետները նշում են, որ այդ քայլով Սերբիան նոր փուլ է բացում Եվրամիության եւ Կոսովոյի հետ իր ունեցած խնդիրների կարգավորման գործընթացում: Սերբիան փաստորեն հրաժարվում է Եվրոպայում մեկուսացված պետություն լինելու հեռանկարից՝ գերադասելով Կոսովոյի հետ իր հարցերը վստահել ԵՄ-ին: Կոշտ դիրքորոշումից նահանջելով՝ Բելգրադը հավաստիացումներ ստացավ ԵՄ անդամակցության հարցում:

Այսպիսով, ՄԱԿ-ի ԳՎ նոր բանաձեւը դարձավ եւս մի քայլ Կոսովոյի անկախության ճանաչման ուղղությամբ, ինչպես միջազգային հանրության, այնպես էլ Սերբիայի կողմից:

Կարելի է եզրակացնել, որ չնայած այն հանգամանքին, որ Եվրոպան համակած տնտեսական ճգնաժամը որոշակի դադար մտցրեց ԵՄ-ի ընդլայնման ռազմավարության մեջ, սակայն Բրյուսելը շարունակում է «աշխատանքային ռեժիմում» պահել Բալկանյան պետությունների ներգրավման իր նախագծերը՝ չստանձնելով կոնկրետ պարտավորություններ անդամակցության ժամկետների առումով:

Դիտորդները փաստում են, որ առանց արտաքին միջամտության իրադրությունը Բալկաններում միայն շարունակելու է վատանալ: Ամերիկյան փորձագետները կանխատեսում են, որ միջազգային ուժերի ներկայությունը Կոսովոյում կպահպանվի առնվազն գալիք տասը տարիների, եւ խորհուրդ են տալիս Բ.Օբամայի վարչակազմին՝ Կոսովոյի ճակատագրի հետ կապված հոգսերը, այդ թվում՝ ֆինանսական, թողնել ԵՄ-ին:

Կոսովոյի շուրջ իրավիճակը փաստում է, որ ամերիկյան ուժը եւ Եվրոպական աշխարհաքաղաքական նախագծերը, որպես կանոն, հանդես են գալիս միասնաբար: Եվրոպան ԱՄՆ վարչակազմի հետ համագոր-

ծակցության սերտացման միջոցով ձգտում է հասնել իր աշխարհաքաղաքական ու տնտեսական նպատակներին, իսկ Միացյալ Նահանգները ծեռք է բերում քաղաքական ու տնտեսական կարեւորագույն դերակատարի (Եվրոպայի) աջակցությունը՝ դարձնելով սեփական դիրքերը համաշխարհային քաղաքականության մեջ ամուր՝ գոնե տեսանելի ապագայի առումով:

Միեւնույն ժամանակ, Կոսովոյի ճանաչումից հետո, ԱՄՆ-ի կողմից իր դիվանագիտական ու հետախուզական անձնակազմը Բալկաններից դեպի Չարավային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա տեղափոխելու գործընթացը վկայում է, որ Կոսովոյում եւ ընդհանրապես՝ Բալկաններում իրականացված կարգավորման մոդելները, սցենարները կամ դրանց տարրերը հնարավոր է կիրառվեն նաեւ վերոնշյալ տարածաշրջաններում:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՎԵՐԸ

Ֆեոդոր Լուկյանով – *«Россия в глобальной политике»*
հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի արտաքին եւ պաշտպանական քաղաքականության խորհրդի անդամ

Ամենայն հավանականությամբ, քաղաքական նոր շրջանն (2010թ. աշուն–2011թ. ամառ) անցնելու է երկու միջազգային խնդիրների նշանի ներքո. Իրանի միջուկային ծրագրի ճակատագիրը եւ ռազմավարությունն Աֆղանստանում: Աշխարհի առաջատար երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ որոշ չափով՝ նույնիսկ Չինաստանի պահվածքի վրա «կընկնի» առաջիկա (մեկուկես-երկու տարի հետո) ընտրությունների ստվերը: Նախկին ԽՍՀՄ տարածքում՝ Սոլդովայում, Լատվիայում, Ղրղզստանում եւ Բելառուսում, կարելուք քվեարկություններ են սպասվում շուտով:

Իրանի դեպքում մոտենում է տիպիկ որոշումների ընդունման ժամանակը: Մայիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հավանության արժանացած պատժամիջոցները չազդեցին Թեհրանի վրա: Եվ անգամ ԱՄՆ-ի ու Եվրամիության կողմից մտցված առավել կոշտ միակողմանի միջոցներն ազդեցություն չունեցան: Ինչ անել այսուհետ՝ ոչ ոք չգիտի:

Մինչդեռ, Բարաք Օբամային ավելի ու ավելի բարձրաձայն են մեղադրում թուլության եւ Իրանի սպառնալիքը կասեցնելու անկարողության մեջ: Ամերիկյան փորձագետների միջից ծայներ են լսվում, թե միջուկային Իրանն աշխարհի վերջը չէ, սակայն քաղաքական մակարդակում նման հեռանկարը համարվում է աղետ: Եթե սկզբում Օբամային ճկունություն դրսևորելու հնարավորություն կար, ապա այժմ նրան ճնշում է արտաքին քաղաքականությունում հաջողությունների անհրաժեշտությունը, որոնք, մեծ հաշվով, չկան: Իսկ որքան ավելի մոտ են 2012-ի ընտրությունները, այնքան հաջողությունները պետք է ավելի ծանրակշիռ լինեն: Իրանական խնդիրն, ըստ էության, դիտարկվում է ոչ այնքան անվտանգության տեսանկյունից (ինչպես Իսրայելում), որքան հեղինակության. Ամերիկյան պարտավոր է ցուցադրել իր քաղաքական, իսկ եթե պետք է՝ նաեւ ռազմական հզորությունը:

Չի կարելի բացառել, որ Վաշինգտոնը, հայտնվելով ներքին և արտաքին ճնշման ներքո, կվճռի ուժ գործադրել: Ի վերջո, խաղաղարար Օբաման իր նորեկյան ճառում հիշեցրել է, թե պատերազմը քաղաքականության անբաժանելի ու երբեմն անհրաժեշտ տարրն է: Ընդ որում, եթե զարգացումն ընթանա այդ ուղղությամբ, ապա այն կլինի արագ. որքան երկար հետաձգվի, այնքան ռիսկը կլինի մեծ: Այնպես որ, մոտակա ամիսները լինելու են որոշիչ:

Ուժերն Իրանի վրա կենտրոնացնելու համար Միացյալ Նահանգները պետք է հասկանա, թե ինչ անել Աֆղանստանի հետ: Բարաք Օբաման խոստացավ մինչև հաջորդ տարվա կեսերն ապագայի հանդեպ կողմնորոշվել՝ հեռանալ կամ մնալ: Ձինվորական ղեկավարությունը, մասնավորապես՝ աֆղանական ռազմական գործողության նոր հրամանատար Դեևիդ Փեթրեուսը, հակված չեն շտապելու, թեև ռազմաքաղաքական իրավիճակը լավատեսության համար նվազ հիմքեր է տալիս: Ճիշտ է, բացառված չէ, որ Իրանին ուժով կանգնեցնելու որոշման դեպքում հարեւան Աֆղանստանում տեղակայված ամերիկյան խոշոր զորակազմին վիճակվի խաղալ իր դերը: Իսկ նրա հետագա ճակատագիրն արդեն կախված կլինի տարածաշրջանի իրավիճակից. Իրանի դեմ պատերազմի դեպքում, ինչպես էլ գործողությունն ավարտվի, ուժերի ողջ դասավորվածությունը կփոխվի:

Ընտրությունների շունչը զգացվում է ոչ միայն Ամերիկայում: Ռուսաստանում ընտրարշավը փաստորեն սկսվել է, քանզի այստեղ որոշումն ընդունվում է ոչ թե քվեարկության ժամանակ, այլ նրան նախորդած ժամանակահատվածում:

Կառավարող խումբը, հավանաբար, ապագա կառուցվածքը կորոշի 2011թ. կեսերին: Իսկ մինչ այդ պահը ե՛լ ներքին, ե՛լ արտաքին քաղաքականությանը բնորոշ կլինի նյարդայնությունը, որը Ռուսաստանում միշտ կտրուկ աճում է, երբ որոշվում է իշխանության հարցը: Ամեն ինչ ենթարկվում է մեկ մարտավարական խնդրի լուծմանը: Եւ էլ ավելի վատ, եթե այդ ժամանակահատվածին բաժին ընկնեն բուռն իրադարձություններ միջազգային ասպարեզում, որոնք կպահանջեն Մոսկվայի արագ հակադարձումը:

Ռուսաստանյան ընտրությունների (2012թ. գարուն) հետ միաժամանակ կայանալու են ընտրություններ Ֆրանսիայում. երկիր, որից կախված է Եվրոպայում տիրող մթնոլորտը: Նիկոլա Սարկոզիի

ժողովրդականությունն իջել է նվազագույնի, սակայն ֆրանսիական փառասեր նախագահը հեշտությամբ անձնատուր չի լինի: Գալիք շրջանում հարկ է սպասել նրա ակտիվության կտրուկ աճի: Ըստ էության, այն արդեն սկսել է բուլղար եւ ռումին գնչուների արտաքսման կամպանիան վերածվել է ազգային ու եվրոպական խոշոր թեմայի: Սարկոզին փորձում է ինչ-որ նոր նախաձեռնություններ բանեցնել, որպեսզի ամրապնդի Փարիզի դիրքերը Եվրամիությունում, որը խճճվել է ներքին հարցերում: Նախորդ փորձից կարելի է ենթադրել, որ ֆրանսիական նախագահի իմպուլսիվ գործողությունները միայն խորացնելու են խառնաշփոթը Եվրոպայում, թեև, հնարավոր է, տանը նրան մի քանի միավոր ավելացնեն:

Ինչպես եւ Օբամայի դեպքում, Սարկոզիի համար վճռորոշ կլինեն տնտեսության զարգացման ցուցանիշները, իսկ դրանցով առայժմ ո՛չ Սպիտակ տունը, ո՛չ Ելիսեյան պալատը պարծենալ չեն կարող:

Իշխանության փոփոխության հարցն արդիական է նաեւ Պեկինի համար. 2012թ. կոմունիստական կուսակցության համագումարում ԶԺՅ ներկայիս նախագահ Յու Ցզինտանն հանձնելու է իր պաշտոնը: Չինաստանում կտրուկ շրջադարձներ չեն լինում եւ փոփոխությունները նախօրոք են պատրաստվում: Բայց երբ խոսքն այդքան բարդ ու կարելոր երկրի մասին է, որը գտնվում է ներքին ձեւափոխությունների փուլում, գործընթացի համաչափության ապահովումը պատասխանատու գործ է: Դեռ սպասվում է նաեւ հետնորդի եզրափակիչ ընտրությունը: Չինական արտաքին քաղաքականության վրա այն վճռական ազդեցություն չի ունենա, սակայն նրբություններ հնարավոր են. ընդ որում, ինչպես եւ ռուսաստանյան դեպքում, հայրենասիրական քարոզչության չափաբաժնի ավելացման ուղղությամբ:

Մոտակա ամիսներին ղեկավարություն կամ կառավարման ձեւ են ընտրելու Ռուսաստանի հարեւանները:

Մոլդովայում սահմանադրական կառուցվածքի մասին հանրաքվեն կոչված է երկիրը դուրս բերելու փակուղուց, որը կապված է նախագահ ընտրելու խորհրդարանի անկարողության հետ (*ինչպես հայտնի է՝ հանրաքվեն ձայնողվեց, եւ նշանակված են խորհրդարանի արտահերթ ընտրություններ – թարգմ.*): Ինչ էլ որ տեղի ունենա Քիշնեւում, այն չի շրջի հետխորհրդային տարածքը, բայց եթե նախկին խորհրդային հանրապետություններից եւս մեկը (Ուկրաինայից հետո) հրաժարվի բացահայտ հակառուսական ուղեգծից, որն այժմ առաջարկում է

նախագահի պաշտոնակատար Միխայ Գիմպուն, Մոսկվայում միտումի մասին խոսելու հիմքեր կառաջանան:

Ուշագրավ են Լատվիայի ընտրությունները: Անկախության տարիներից առաջին անգամ կառավարություն մտնելու, եթե ոչ՝ այն գլխավորելու, հնարավորություն ունի «Յամաձայնություն» կուսակցությունը, որը ներկայացնում է ազգային փոքրամասնությունների շահերը եւ միշտ հանդես է գալիս Ռուսաստանի հետ հարաբերությունների օգտին: Լատվիայի համար դա կնշանակի քաղաքական հասունության բարձր աստիճան. քաղաքացիները քվեարկում են ոչ թե ազգակիցների օգտին, այլ նրանց, ովքեր, իրենց կարծիքով, ավելի լավ կլուծեն երկրի վիթխարի քանակության խնդիրները: Ռուսաստանի համար այն կբացի տնտեսական համագործակցության հնարավորություններ, որոնք նախկինում քաղաքական նկատառումներով արգելափակվում էին: Եվ, թեպետ, հեղափոխություն չի լինի, Լատվիան կմնա ԵՄ ու ՆԱՏՕ անդամ, կարելու է նախադեպը:

Ղրղզստանի խորհրդարանական ընտրություններին դիտորդները սարսափով են սպասում: Հակաբաքիեական ուժերի դաշինքը վերջնականապես փլուզվեց, իսկ թե քվեարկությունից հետո ինչ տեսք կունենա քաղաքական կառուցվածքը՝ հասկանալի չէ: Ամենամռայլ կանխատեսումները չիրականացան. հունիսյան հանրաքվեն կայունացրեց իրավիճակը եւ պահպանեց տարրական կառավարելիությունը: Սակայն դրությունն այնքան երեւում է, որ մեկ կայծից էլ հրդեհ է բռնկվում:

Վերջապես, գլխավոր ինտրիգը նախագահական ընտրություններն են Բելառուսում, որոնք այս տարի արդեն կարող են անցկացվել: Նախկինի պես Ալեքսանդր Լուկաշենկոյին իրական մրցակիցներ չկան. ընդդիմությունը միասնական ճակատի շուրջ պայմանավորվելու ընդունակ չէ, իսկ նոմենկլատուրայի ներսում խիզախել ցանկացողներ չեն երեւում: Սակայն «բատկային» առաջին անգամ հարկ է լինելու վերընտրվել ռուսական կողմից խիստ բացասական տեղեկատվական ու քաղաքական ֆոնի պայմաններում: Բացառված չէ, որ վերջին հաշվով այն չազդի արդյունքի վրա, բայց միանշանակորեն ասել հնարավոր չէ, քանզի նման փորձ դեռեւս չի եղել:

Կա չնչին հնարավորություն, որ մինչ ընտրությունները Մոսկվան եւ Մինսկը համաձայնության կգան վիճելի հարցերի շուրջ, ինչպիսիք են Մաքսային միությունը եւ Հավաքական անվտանգության պայմանագրի

կազմակերպությունը: Սակայն դիմակայությունը, այդ թվում՝ անձնական, հասել է շատ բարձր լարվածության. այնպես որ, բացառված չէ, որ կողմերը գնան «վա-բանկ»: Առավել հետաքրքիր իրավիճակ կառաջանա, եթե Լուկաշենկոն, չնայած Ռուսաստանի հակազդեցություններին, այնուամենայնիվ, պահպանի իշխանությունը: Այդժամ Մոսկվան պետք է մտածի ինչ անել. շարժվել Վիկտոր Յուշչենկոյի հետ հարաբերությունների մոդելով՝ ընդհուպ լիակատար խզո՞ւմ, թե՞ «բատկային» առաջարկել պատվաբեր խաղաղություն՝ տնտեսական արտոնություններով:

Gazeta.ru

03.09.2010

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Չարությունյան ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	1
Սեւակ Սարուխանյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7
Արեստակես Սիմավորյան ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԸ	11
Ռուբեն Մելքոնյան ԴԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	17
Արաքս Փաշայան ԻՐԱՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԳՈՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԱՋ	22
Բենիամին Պողոսյան ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ ԻՐԱՔՈՒՄ	27
Հայկ Գաբրիելյան ԹՈՒՐՔԻԱ – ՔԿԿ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ	32
Արտաշես Տեր-Չարությունյան ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	39
Սուրեն Սարյան ԿՈՍՈՎՈՅԻ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	43
Ֆեոդոր Լուկյանով ՊԱՏԵՐԱՋՄԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՎԵՐԸ	48

*Շապիկին պատկերված է
Ջեյհան գետը (Կիլիկիա)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4,5 մանուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: